# Գիտություն

ՀՈԿՏԵՄԲԵՐ

№ 10 (174)

2004թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից


# ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ը՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐ

*Լուսանկարը՝ Մանան ԹԵՎՈՍՅԱՆԻ*

**Առաջին անգամ Հայաստանում, Գիտությունների ազգային ակադեմիայում մեծ շուքով նշվեց գիտության օրը՝ հոկտեմբերի 4-ը:**

Այդ առթիվ ակադեմիան կազմակերպել էր միջոցառումների շարք: Ակադեմիայում հյուրընկալվեցին Երևանից և մարզերից ժամանած, դպրոցական օլիմպիադաներում հաղթած շուրջ 150 դպրոցականներ, որոնցից 15-ը հաղթել էին նաև տարբեր միջազգային օլիմպիադաներում: Դպրոցականներին շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար Էդուարդ Ղազարյանը, ակադեմիկոսներ Յուրի Շուքուրյանը, Էմիլ Գաբրիելյանը, Ադոլֆ Մանթաշյանը, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի տնօրեն Նորբեր Ժուստենը, ՀՀ կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը և այլոք: Ապա ակադեմիկոսները օլիմպիադաներում հաղթած երեխաներին հանձնեցին մրցանակներ և նվերներ: ՀՀ ԳԱԱ պատվոգրերով պարգևատրվեցին նաև «Քվանտ», «Անանիա Շիրակացի» վարժարանները, Գյումրիի N 1 կրթահամալիրը և Երևանի N 194 դպրոցը: Սրանք այն օջախներն են, որոնց սաները հաղթող էին ճանաչվել միջազգային օլիմպիադաներում: Ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը շնորհավորելով պատանիներին միաժամանակ նշեց, որ արծաթե և բրոնզե մեդալներն իրեն չեն գոհացնում, պետք է աշխատել ոսկե մեդալներ բերելու ուղղությամբ: Նա նաև նշեց, որ բացառված չէ, որ այս դպրոցականներից շատերը վաղը համալրելու են գիտության նվիրյալների շարքերը, ուստի վերջիններիս համար հնարավորություն ընձեռվեց լինելու գիտական այն ինստիտուտներում, որոնք ապագայում նրանց հնարավոր աշխատատեղերն են լինեու:

*Գիտության օրվա կապակցությամբ* հայ գիտնականներին իրենց շնորհավորական ուղերձն էին հղել ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ու ԱԺ խոսնակ Արթուր Բաղդասարյանը: Վարչապետի ուղերձում մասնավորապես ասված է. «Արդի հասարակական կյանքն իրավամբ խարսխված է գիտության նվաճումների վրա, որոնց արդյունավետ օգտագործումը մեծապես կարող է նպաստել կուտակված սոցիալ-տնտեսական, բնապահպանական և այլ կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը: Աշխարհի համեմատաբար բարձր համարում ունեցող հայաստանյան գիտությունն այսօր նոր պայմաններում կայանալու, համաշխարհային գիտության մեջ իր արժանի տեղը վերահաստատելու և զարգացման ուղիներ նախանշելու դժվարին խնդրի առջև է կանգնած, ինչը, վստահ եմ, հաջողությամբ կլուծվի նպաստելով մեր գիտության հեղինակության բարձրացմանն ու Հայաստան երկրի հետագա բարգավաճմանը»:

Գիտության օրվան նվիրված միջոցառումների երկրորդ մասում գիտնականները քննարկեցին արդի գիտության առջև ծառացած մի շարք հարցեր, մասնավորապես գիտությունը որպես տնտեսական զարգացման գործոն, պետական քաղաքականությունը գիտական ոլորտում, գիտության հնարավոր զարգացումը Հայաստանում, հնարավորությունները, ինֆրակառուցվածքը, ռեսուրսները, գիտության ոլորտները և միջազգային համագործակցության հնարավոր հաջողակ ուղիները և այլն: Ըստ Յուրի Շուքուրյանի, գիտությունը պետք է նպատակաուղղված լինի տնտեսության զարգացմանը: Գիտնականները փաստեցին նաև, որ ժամանակն է, որ մեր պետությունը գիտության զարգացման ուղղությունները նախանշող որոշակի ծրագիր ունենա գոնե մինչև 2015 թվականի համար:

Իսկ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելանի ելույթը վերաբերում էր միջազգային համագործակցության հնարավորություններին: Գիտնականը նշեց, որ այսօր պետք է ավելի նպատակաուղղված աշխատանք տանել միջազգային համագործակցության լայն ոլորտներ դուրս գալու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա լուծելու ոչ միայն ինչ-ինչ ֆինանսական խնդիրներ, այլ նաև կապահովի գիտության զարգացումը:

Միջազգային համագործակցության մի հնարավորություն էլ հայ գիտնականներին ընձեռում է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը: Հայաստանը ՄԳՏԿ-ին անդամակցել է 1994 թվականից: Այս 10 տարիների ընթացքում ՄԳՏԿ-ն Հայաստանում մոտ 100 գիտական ծրագրեր է ֆինանսավորել, որի ընդհանուր գումարը կազմում է 20 մլն դոլար: Սակայն այս ամենը տեխնիկական գիտությունների և բնագիտության ոլորտում: Իսկ հայագիտությունը, ըստ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի, պետք է լինի մեր պետության հոգածության առարկան:

*Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆ*

**Գիտության օրվա առթիվ՝ գիտության արդի պրոբլեմների մասին. մեր թերթի այսօրվա համարում**

## Նոբելյան մրցանակը՝ ամերիկացի գիտնականներին

Ամերիկացի Ռիչարդ Աքսելը և Լինդա Բաքը հոտառության ընդունիչների ոլորտում կատարած հայտնագործության համար ճանաչվել են 2004 թվականին ֆիզիոլոգիայի և բժշկագիտության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ: Այս որոշման մասին հոկտեմբերի 4-ին հայտարարել է Ստոկհոլմի Սոլնա արվարձանում գտնվող կարոլինյան բժշկավիրաբուժական ինստիտուտը:

## Գյումրին՝ գիպական խոշոր կենտրոն

(անշուշտ՝ Երևանից հետո)

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀՀ Նախագահ պրն ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Վերջին տարիներս հսկայածավալ շինարարական աշխատանքներ ծավալվեցին Գյումրիում: Գյումրի էր ուղղորդվել Լինսի հիմնադրամի զգալի միջոցներ, հանրապետության բյուջեի և սեփականաշնորհման արդյունքների ֆինանսական շոշափելի հոսքեր: Երկու-երեք տարվա ժամանակահատվածում այդպիսի ծավալներով շինարարական աշխատանքներ Գյումրիում չէր եղել, նույնիսկ երկրաշարժից առաջ: Աշխատանքներն ընթանում էին անմիջական Ձեր վերահսկողության ներքո: Արդյունքում կառուցվեցին ու վերակառուցվեցին մեծ քանակությամբ բնակելի շենքեր, հիմնականում բավականին գեղեցիկ և բնակարանային լավագույն հարմարություններով: Բնակարաններ ստացան երկրաշարժի հետևանքով բնակարաններ կորցրած քաղաքի մեծ թվով ընտանիքներ: Ճիշտ է, այդ խնդիրը վերջնականապես չլուծվեց, սակայն այն մեծամասամբ իրագործվեց: Հիմնովին վերաշինվեցին և վերանորոգվեցին քաղաքի մայր փողոցները: Քաղաքը որոշակի տեսքի եկավ: Ճիշտ է, քաղաքաշինական առումով հսկայական աշխատանքներ դեռ կան անելու, սակայն արվածը՝ քաղաքի համար ունեցավ սկզբունքային և հիմնարար նշանակություն:

Սակայն ակնհայտ է, որ քաղաքաշինական, բնակարանաշինական և մշակութային օջախների վերաստեղծման հիմնախնդիրների կողքին, Գյումրիի պարագայում, ամենաառաջնային հիմնախնդիրը եղել և մնում է նրա տնտեսական առաջընթացը: Այս ասպարեզում իրադրությունը չափազանց բարդ է: Թեպետ մեր քաղաքի պատգամավորներին ի վերջո հաջողվեց ԱԺ-ում Գյումրիի վերաբերյալ ա- ⇨4

## «Ներսես Աշտարակեցի՝ պաշտպան հայրենյաց»

Օշականի «Մեսրոպ Մաշտոց» դպրատանը տեղի ունեցավ «Ներսես Աշտարակեցի պաշտպան հայրենյաց» գիտաժողովը նվիրված Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի գահակալության 160, Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու 175, Ներսիսյան դպրոցի հիմնադրման 180, Աշտարակ քաղաքի դպրոցը նրա անունով կոչելու 135-ամյա տարելիցներին:

Այս նստաշրջանն արդեն հինգերորդն է, որ Օշականի Մ. Մաշտոցի դպրատան հետ համատեղ կազմակերպում է ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիան: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ինստիտուտների, Պետական համալսարանի և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հայագիտական ամբիոնների, Մատենադարանի, Հայաստանի արխիվների, Ազգային պատկերասրահի աշխատակիցները: Երկու տասնյակից ավելի զեկուցումները նվիրված էին Ն. Աշտարակեցու կյանքին և գործունեությանը, հայ եկեղեցու, ժողովրդի ու պետության ճակատագրում նրա ունեցած դերին: Ներկայացված էին «Ներսես Աշտարակեցին և իր ժամանակը» (Վ. Բարխուդարյան), «Ներսես Աշտարակեցին Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ (Վ. Միքայելյան), «Անդրադարձ Ներսես Աշտարակեցու շինարարական գործունեությանը» (Վ. Հարությունյան), «Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես 5-րդ Աշտարակեցին 19-րդ դարի ռուսաց պատմագիտական և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ) (Մ. Մուրադյան), «Ներսես Աշտարակեցին ազգային վիմագրության առաջնեկ» (Պ. Մուրադյան) և ուրիշ զեկուցումներ:

Գիտաժողովը անցկացվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր հովանավորությամբ: Այն ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը, որն, ի դեպ, դպրատան գիտական խորհրդի հիմնադիրներից է:

Նստաշրջանի աշխատանքները ողջունեցին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վ. Դրյուկովը և Արագածոտնի մարզպետ Գ. Գյոզալյանը:

*Մելինե ՍԱՐԳՍՅԱՆ*



Ինչպես հաղորդում են ամերիկյան լրատվական միջոցները, գիտնականներին հաջողվել է գրանցել հեռավոր երկու գալակտիկաների բախումը: Դժվար է, սակայն, ասել, թե երբ է այն տեղի ունեցել. չէ որ հեռավոր գալակտիկաներից ինֆորմացիան մեզ կարող է հասնել միլիոնավոր տարի անց...

## Տեղեկատվական օր

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Եվրոպական Վեցերորդ շրջանակային ծրագրի (ՎՇԾ) Ազգային տեղեկատվական կենտրոնը սեպտեմբերի 27-ին կազմակերպել էր «Եվրոպական Միության Վեցերորդ Շրջանակային Ծրագիր. մասնակցության և ֆինանսավորման հնարավորությունները» խորագրով տեղեկատվական օր, որի նպատակն էր Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներին և գիտական լայն հանրությանը ներկայացնել այն հնարավորությունները, որոնք ընձեռվում են մեր երկրի գիտահետազոտական կենտրոններին՝ տվյալ ծրագրի շրջանակներում եվրոպական գործընկերների հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու և ֆինանսավորում ստանալու համար:

Սույն Տեղեկատվության օրը հերթականն էր Եվրոպական գիտահետազոտական ծրագրերի, մասնավորապես, ՎՇԾ-ի մասին ընդհանուր իրազեկության բարձրացման և Հայաստանի կազմակերպությունների մասնակցության խթանման ուղղությամբ իրականացվող նմանատիպ միջոցառումների շարքում, որին հրավիրվել էին մասնակցելու Եվրահանձնաժողովի Վրաստանում և Հայաստանում առաքելության բաժնի ղեկավար պրն Գերարդ Գալլերը, ԻՆՏԱՍ կազմակերպության Տնտեսագիտական, հասարակական և հումանիտար գիտությունների համար պատասխանատու աշխատակից Գյուլնարա Ռոլը, ՎՇԾ-ի Հունական կոնտակտային HELP-FORWARO NETWORK կազմակերպության ներկայացուցիչներ Վասիլիոս Ցակալոսը և Անաստասիա Կոնստանտինուն: Միջոցառմանը մասնակցեցին և ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտներ էմիլ Գաբրիելյանը և Յուրի Շուքուրյանը:

Միջոցառմանը ներկա էին ավելի քան 60 մասնակիցներ, որոնք ներկայացնում էին ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտները, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, Երևանի Պետական համալսարանը, Ճարտարագիտական համալսարանը, Բժշկական համալսարանը, Գյուղատնտեսական ակադեմիան, տարբեր գիտաարտադրական միավորումներ և հասարակական կազմակերպություններ:

Հրավիրված արտասահմանյան հյուրերը և Տեղեկատվական կենտրոնի համակարգող Տիգրան Արզումանյանը զեկուցումներ ներկայացրեցին ՎՇԾ-ում Հայաստանի մասնակցության վերջին տվյալների, ԻՆՏԱՍ կազմակերպության շրջանակներում ֆինանսավորում ստանալու հնարավորությունների, ՎՇԾ-ում մասնակցության Հունաստանի փորձի, ՎՇԾ-ի շրջանակներում իրականացվող միջազգային համագործակցության, ինչպես նաև ՎՇԾ-ի շրջանակներում հաջող նախագիծ ներկայացնելու հմտությունների վերաբերյալ:

Մասնավորապես, իր զեկուցման մեջ պարոն Գալլերը նշեց, որ ս.թ. ապրիլի դրությամբ ՎՇԾ-ի շրջանակներում ներկայացվել է մոտ 30 նախագիծ Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և խմբերի մասնակցությամբ, որոնցից միայն մի քանիսն են հաջողությամբ պսակվել և ստացել ֆինանսավորում: Այսպիսի ցածր ցուցանիշը կարելի է վերագրել ծրագրի ընդհանուր բարդությանը և մի քանի եվրոպական գործընկերներից կազմված «կոնսորցիումներում» մասնակցության անհրաժեշտությամբ: Բացի այդ, բավականին խիստ է մրցակցությունը ծրագրի շրջանակներում և հաջողության հավանականությունը միջին հաշվով կազմում է 15-18 տոկոս: Հուսով ենք, որ Եվրամիություն-Հայաստան գիտահետազոտական համագործակցության խթանման ուղղությամբ ՀՀ ԳԱԱ ղեկավարության ջանքերը և ՎՇԾ Ազգային տեղեկատվական կենտրոնի նպատակասլաց գործունեությունը կնպաստեն Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների ավելի ակտիվ մասնակցությանը ՎՇԾ-ում: Ինչպես նշեց Տ. Արզումանյանը, այդպիսի լավատեսության համար առկա են համապատասխան նախադրյալներ և ունեցած տվյալների համաձայն, ս.թ. սեպտեմբեր ամսին վերջնաժամկետ ունեցող ՎՇԾ տարբեր ծրագրերում ներկայացվել է մոտ տաս նախագիծ Հայաստանի գիտահետազոտական խմբերի մասնակցությամբ: Մի քանի նախագծեր են նախապատրաստվում նաև մինչև տարվա վերջ վերջնաժամկետով հայտերի ներկայացման մրցույթներին մասնակցելու համար:

*Լրատվական ծառայություն*

### Քննարկումներ, առաջարկներ, վերլուծություններ

# Ֆինանսավորում, տեխնիկական ապահովվածություն, պետական հոգածություն...

Մեծ գիտնական Լուի Պաստերը գրել է. «Մարդկությունն առանձնացնում է հիմնարար և կիրառական գիտությունները, որտեղ առաջինը սնունդ է տալիս երկրորդին: Բայց իրականում գոյություն ունի հիմնարար գիտություն և նրա շարունակությունը, որը դառնում է կիրառական»: Ֆիզիոլոգիան այս դեպքում դասական օրինակ է: Ավելին, մեր ֆիզիոլոգներն այս կապը բացատրում են առավել համակարգված և բանաձևի տեսքով, տալիս նրա տրամաբանական շարունակությունը՝ հիմնարար գիտություն-կիրառական գիտություն-արտադրություն:

Հետաքրքիրն այն է, որ կենսաբանական գիտությունների թեկնածու Արմեն Ոսկանյանը, որը զբաղվում է օրգանիզմի վրա թույների ազդեցության ուսումնասիրությամբ, նշում է, որ այսօրվա հայկական իրականության մեջ հիմնարար գիտությունը Խորհրդային Միության մնացորդային ժառանգությունն է և այն չի կարող համաքայլ ընթանալ այս ասպարեզում համաշխարհային նվաճումների հետ չունենալով համապատասխան ֆինանսավորում, տեխնիկական ապահովվածություն և պետական հոգածություն: Սակայն նույնիսկ նման պայմաններում հիմնարար գիտությամբ զբաղվող գիտնականները ձգտում են պատշաճ մակարդակով կազմակերպել իրենց աշխատանքները: Օրինակ հեպարինի որպես օձի խայթոցի դեմ հակաթույնի կիրառման առաջարկությամբ, պարոն Ոսկանյանը փաստորեն սկսում է վերոհիշյալ բանաձևի միջին օղակից: Գիտնականը հավաստիացնում է, որ հիմնարար հետազոտությունները, կապված մարդու օրգանիզմում ջերմաստիճանի փոփոխության, օրգանիզմի ներսում հեղուկների վերաբաշխման, մազանոթային ցանցից հեղուկների կորստյան և այլ պրոցեսների հետ, բավարար չափով կատարված են: Տասնյակ տարիներ շարունակ կա նաև հեպարինի արտադրությունը: Բանն այն է, որ հեպարինը շուրջ երկու անգամ նվազեցնում է տոքսիկությունը օրգանիզմում: Դա նշանակում է, որ այն օրգանիզմ մղված թույնի մահացու չափաբաժինը կարող է դարձնել միջին ծանրության, դրանով իսկ փրկել մարդու կյանքը: Նույնը կարելի է ասել ասպիրինի մասին, որը ներգործում է ոչ այնքան արդյունավետ, որքան հեպարինը: Պարզապես ասպիրինը հակաբորբոքիչ է, որը կասեցնում է կամ որոշ չափով մեղմացնում պրոստոգլանդինների (հիմնական բորբոքային պրոցեսներին զուգորդող նյութերի) սինթեզը օրգանիզմում: Բացի այդ, տվյալ դեպքում ասպիրինի առավելությունը արյունը ջրիկացնելու հատկությունն է:

Բավականին երկար ժամանակ ռուս և ամերիկացի գիտնականների միջև վիճաբանություն է ընթացել հեպարինի օգտակարության շուրջ: Ռուս գիտնականները պնդում էին, որ հեպարինը օգտակար է, ամերիկացիները փորձում էին հակառակը համոզել: Ըստ պարոն Ոսկանյանի վիճաբանող երկու թևերն էլ ճիշտ են. խնդիրը ոչ թե նյութի բաղադրությունն է, այլ նրա բժշկական ազդեցության ժամանակի ճշգրիտ ընտրությունը: Ամեն ինչ կախված է այն բանից, թե խայթոցից քանի րոպե անց կներարկվի հեպարինը: Կենսաբանորեն դա այսպես է բացատրվում. առաջին 15 րոպեների ընթացքում գնում է արյան մակարդում: Հեպարինը պետք է ներարկել այս ժամանակահատվածում: Թերևս ապահովության համար գիտնականը կրճատում է այս հատվածը և թույլատրելի համարում առաջիկա 5-7 րոպեն: 15 րոպե անց արյունը սկսում է ջրիկանալ, և բնականաբար, հեպարինի ներարկումն արդեն կունենա բացասական ազդեցություն: Սա պետք է իմանան գոնե այն անձինք, ովքեր այս պարագայում պատկանում են մեծ ռիսկի խմբերին, օրինակ դաշտում աշխատող գյուղացիները, երկրաբանները, հնէաբանները, արտակարգ իրավիճակների կազմակերպությունների աշխատակիցները, լեռնագնացները, տուրիստները և վերջապես զինծառայողները: Ի դեպ, գիտնականն արդեն առաջարկել է բանակում կիրառել հեպարինը: Ոչ որքի չի խանգարի, եթե մեր դիրքերում գտնվող զինծառայողներն իրենց ճամպրուկներում ունենան մեկ սրվակ հեպարին և մեկ ներարկիչ, մանավանդ, որ Հայաստանի բնությունը հարուստ է թունավոր օձերով: Հարց է առաջանում որքանով են գրագետ և տեղեկացված մեր զինծառայողները և կկարողանան արդյոք ի շահ իրենց օգտագործել նշված դեղամիջոցը:

Ինչպես ասում են, չկա չարիք առանց բարիքի: Հայաստանում և հատկապես Լեռնային Ղարաբաղում տարածված Կովկասյան գյուրզա տեսակի օձերից կորզվում է թույն, որը ճիշտ վերամշակման դեպքում վերածվում է շատ արժեքավոր նյութի: Այս գաղափարով ԱՊՀ EXPO-2004 ցուցահանդեսին ներկայացված ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի ֆիզիոլոգորեն ակտիվ նյութերի գտման և ստանդարտացման լաբորատորիան Արմեն Ոսկանյանի ղեկավարությամբ և «Բանարար» հասարակական կազմակերպությունը, որի ուշադրության կենտրոնում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհին պատկանող կենսաբանորեն ակտիվ նյութերը: Գյուրզայի թույնը ներկայացվեց իբրև դեղահումք բյուրեղացված վիճակում, որի օգտագործման ժամկետը ավելի քան քսանհինգ տարի է: Այն հիմնականում բաղկացած է տասնվեց և ավել ֆերմենտներից, որոնք օգտագործվում են տարբեր բուժական և ախտորոշիչ նպատակներով: «Թույնը մեզ համար լավ ռեսուրս է,- նշում է պարոն Ոսկանյանը,- բայց այդ ռեսուրսը վաճառելը սխալ կլինի: Եթե այդ հումքը վերամշակվի մեր երկրում, նրա յուրաքանչյուր գրամը պատրաստի արտադրանքի տեսքով վաճառքի դեպքում շատ ավելի մեծ շահույթ կբերի մեզ»:

Ինձ լրագրողիս համար, անարդարացի է, որ բնությունը մեկին նավթ է շռայլում, մյուսին թունավոր գյուրզա: Իսկ դու, գիտնական, ստիպված ես անընդհատ վերծանել նրա առեղծվածները և կորզել նրանից առավելագույնը:

*Գրետա ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ*

# Հստակեցվեցին ուղղությունները...

Ռուսաստանի Դաշնության Հարավային Դաշնային տարածաշրջանի գիտնականների պատվիրակությունը այցելեց Երևան: Պատվիրակությունը գլխավորում էր Հարավային գիտական կենտրոնի նախագահ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Գենադի Մատիշովը:

Պատվիրակությունը ծշտեց հայ գիտնականների հետ համագործակցության ոլորտները: Համագործակցությունը նախատեսված է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի միջև կնքված պայմանագրով, ինչպես նաև այն համաձայնագրով, որը ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի նախագահ Գենադի Մատիշովը ստորագրել են Դոնի Ռոստովում հայկական պատվիրակության հունիսյան այցի ժամանակ:

Ռուս գիտնականների այցի ընթացքում հստակվեցին համագործակցության առավել հեռանկարային ուղղությունները: Մասնավորապես, հետաքրքրություն է դրսևորվել բնապահպանական, բժշկական հետազոտությունների, տեղեկատվական և նանոտեխնոլոգիաների ոլորտի, գիտության պատմության, կրթական ծրագրերի նկատմամբ: Ինչպես սեպտեմբերի 22-ին ասուլիսում հայտարարեց Ֆ. Սարգսյանը, Հայաստանի կառավարությունը հավանություն է տվել նախանշվող համագործակցությանը: Իր հերթին Գ. Մատիշովը ևս նշեց, որ համագործակցությունը ստացել է ՌԴ կառավարության աջակցությունը:

*Ինգա ՉԱՌԱՖՅԱՆ*

# Ազգային միասնության գաղափարը՝ գործունեության հիմք

Հայ գրականության ուսումնասիրությունը նոր մոտեցումներ է պահանջում: Այս կարծիքին է ժամանակակից գրականագետների մեծ մասը: «Կապված հասարակական-քաղաքական կյանքի, ինչպես նաև նոր հազարամյակի փոփոխությունների հետ իրապես մեծ բեկումներ կատարվեցին մեր հոգևոր կյանքում,- նշում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրության դոկտոր Ազատ Եղիազարյանը,- մենք պարզապես պարտավոր ենք թարմացնել մեր հայացքը գրականության նկատմամբ, հետևաբար ստեղծել հայ գրականության նոր պատմություն»: Այն նախատեսվում է գրել առաջիկա տարիներին, վեց հատորով՝ հին, նոր և նորագույն շրջանների ընդգրկումով: Ըստ պարոն Եղիազարյանի նույնիսկ Մանուկ Աբեղյանի նման մեծ մարդու ուսումնասիրությունները նվիրված հայ հին գրականության պատմությանը, այսօր արդեն չեն կարող բավարարել: Մենք ունենք նշված ինստիտուտում ստեղծված «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակը, որը ժամանակին պետական մրցանակ ստացավ, ինչպես նաև Սուրեն Աղաբաբյանի երկհատոր «Արդի հայ գրականության պատմությունը», որը մասնագետների գնահատմամբ դարձյալ բարձրարժեք աշխատություն է: Այս ստեղծվածը հիմք է, որի վրա հենվելով պետք է առաջ գնալ: Նորաստեղծ պատմությունը հեղինակող գրականագետների խմբի անդամներ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի, դոկտորներ Ալբերտ Մուշեղյանի, Գրիգոր Հակոբյանի, Մարգարիտ Խաչատրյանի, գիտությունների թեկնածուներ Վարագ Ներսիսյանի, Արամ Ալեքսանյանի, Ամալյա Ալեքսանյանի, Սաթենիկ Ավետիսյանի և այլոց նպատակն է պահպանել մեկ միասնական հիմնադրույթ և որոշ միասնական սկզբունքներ: Թերևս առաջին անգամ մեզ կհրամցվի հայ գրականության պատմությունը մեկ ամբողջության մեջ, ներառելով միջնադարյան, արևելահայ, արևմտահայ, Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի գրականությունները որպես համահայկական մշակութային երևույթ իր տարբեր դրսևորումներով: «Այս մոտեցման հիմքում ընկած է ⇨ 5

Այս քաղաքացին փողոցի մայթին նկատել է թղթի մի կտոր: Անսպասելի առարկան թույլ չի տալիս իր քաղաքը հարգող գիտնականին անտարբեր անցնել: Բրիտանական «Նյու Սայնս» («Նոր գիտնական») հանդեսից լուսանկարիչը որսացել է պահը, երբ գիտնականը հակառակ իր պատկառելի տարիքին, կռացել է մայթը տեսքից գցող առարկան վերցնելու: Քաղաքն ու երկիրը սիրելը լոզունգ չէ: Հիշենք... Իսկ դուք մի թուղթ վերցրե՞լ եք մայթից կամ ինքներդ չե՞ք դարձել կեղտոտության հեղինակը:

Սերգեյ ԼԵՍԿՈՎ

# Գիտնականի ճակատագիրը

## Ակադեմիկոս Ալիխանովը կարող էր լինել Կուրչատովի տեղը

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ Դաշնությունում հարյուրավոր գիտական ինստիտուտներ կան, սակայն դրանցից շատ քչերն են կրում իրենց հիմնադրի անունը: Այդպիսի պատիվ վիճակվում է ամենանշանավոր գիտնականներին: Ոչ շատ վաղուց Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտին, որն ամեն ինչի գաղտնիացման խորհրդային տարիներին կոչվում էր «լաբորատորիա N 3» (ապագա Կուրչատովյան կենտրոնը՝ «լաբորատորիա N 2), շնորհվեց ակադեմիկոս Աբրահամ Ալիխանովի անունը:

Այսօր լայն հասարակայնությանն այս անունը քիչ բան է ասում: Սակայն, երբ Ստալինը փնտրում էր Խորհրդային Միության միջուկային ծրագրի գիտական ղեկավարի թեկնածու, քննարկվում էր երկու մարդու անուն՝ Կուրչատով կամ Ալիխանով: Չարագույժ լեգենդ էր պտտվում նաև, որ եթե Կուրչատովի ղեկավարությամբ միջուկային ռումբի ստեղծումը գլուխ չգար, նրան փոխարինելու էր Ալիխանովը:

Ինչո՞ւ նախապատվությունը տրվեց Կուրչատովին՝ հիմա դժվար է պարզել: Կա մի քանի ենթադրություն: Ասում են, թե Ստալինի հետ անձնական զրույցի ժամանակ Ալիխանովը չափազանց անկախ է պահել իրեն: Գուցե թե դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Ալիխանովը կուսակցության անդամ չէր: Թերևս նաև նրա կովկասյան ծագումը: Կամ գուցե կռահվում էր նրա չսիրահարվածությունը խորհրդային իշխանության նկատմամբ:

Տարիներ անց դեմոկրատիզմով և արատավոր պաշտոնականության բացակայությամբ առանձնացող Ալիխանովի ինստիտուտում աշխատում էր խորհրդային ամենանշանավոր այլախոհներից մեկը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Յուրի Օռլովը:

Հետաքրքրական է մի փաստ: 1943 թվականին Գիտությունների ակադեմիայի ընտրությունների ժամանակ ակադեմիկոս ընտրվեց հենց Ալիխանովը, որն այդ ժամանակ արդեն համաշխարհային ճանաչում ուներ: Իսկ Կուրչատովի համար ԽՄԿԿ Կենտկոմի պնդմամբ լրացուցիչ տեղ հատկացվեց, այլապես ընտրությունները համարվելու էին չեղյալ: Եվ, այնուամենայնիվ, անպայման նշենք, որ Կուրչատովը և Ալիխանովը միշտ մնացին լավ ընկերներ: Ի դեպ, Ալիխանովի թշնամիները հիմնականում կուսակցական բյուրոկրատիայի շարքերում էին, և որոնք էլ հաճախ էին նրա ինստիտուտը ենթարկում «մաքրման»:

Ալիխանովը ծնվել է Անդրկովկասյան երկաթուղու շոգեքարշի մեքենավարի ընտանիքում: Մեզ հայտնի է, որ մեքենավարները այն ժամանակ պատկանում էին բանվորական արիստոկրատիայի դասին: Ընտանիքի բոլոր չորս զավակներն էլ բարձրագույն կրթություն ստացան, իսկ եղբայրներից մեկը՝ Արտեմ Ալիխանովը, դարձավ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, հիմնադրեց Հայաստանի ֆիզիկայի ինստիտուտը:

Աբրահամ Ալիխանովը արվեստի նուրբ գիտակ էր: Նրա կինը՝ Սլավա Ռոշալը, ջութակահարների միջազգային մրցույթի դափնեկիր էր: Ալիխանովը շատ մտերիմ էր Օբորինի, Յուդինայի, Կաբալևսկու, Խաչատրյանի, Սարյանի հետ:

Մոսկվայի Չերյոմուշկայում գտնվող Ալիխանովի բնակարանը այն հազվագյուտ տեղերից մեկն էր, ուր նյարդայնությամբ հայտնի Շոստակովիչը ժամերով կարող էր մնալ և լավ զգալ իրեն: Շոստակովիչը հաճախ էր սիրում կրկնել. «Աբրահամ Իսակովիչ, դուք հիանալի բնակարան ունեք, սակայն ինչպե՞ս եք կարողանում այդքան հեռու ապրել կոնսերվատորիայից»:

Այն ժամանակ մոսկովյան Չերյոմուշկա գյուղը, ուր կառուցվել էր Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտի շենքը, թվում էր, թե գտնվում է աշխարհի ծայրին: Ի դեպ, երբ ինչ-որ մի ժամանակ երկրով մեկ բուռն քննարկումներ ծավալվեցին ֆիզիկայի և լիրիկայի մասին (այլ խոսքով՝ աշխարհի ռացիոնալության և արվեստի ավելորդ լինելու մասին), մամուլում առաջինը հանդես եկավ Ալիխանովը (Էրենբուրգից էլ առաջ) և այդ բանավեճը որակեց անհեթեթություն և բացարձակ ապուշություն: Նա սիրում էր կրկնել ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի այն խոսքերը, որ «մարդը խոզից տարբերվում է մասնավորապես նրանով, որ երբեմն նայում է աստղերին»:

1955 թվականին, երբ Խորհրդային Միությունում հաջողությամբ փորձարկվեց առաջին ջրածնային ռումբը, ծրագրի ղեկավարներ, ակադեմիկոսներ Կուրչատովը, Ալիխանովը, Ալեքսանդրովը և Վինոգրադովը, նամակ ուղարկեցին Կենտրոնական կոմիտեի ղեկավարությանը, ուր ասվում էր, թե գերզենքի ստեղծումից հետո համաշխարհային նոր պատերազմը դառնում է անկարելի, այն կհանգեցնի մարդկության ոչնչացմանը, և դրա համար էլ անրաժեշտ է մշակել միջազգային նոր քաղաքականություն: Մալենկովը այս հակապատերազմյան նամակին հավանություն տվեց, իսկ Նիկիտա Խրուշչովը օգտագործեց կուսակցական ընկերոջ «քաղաքական կարծատեսությունը» նրան գահընկեց անելու համար:

Մի քանի տարի հետո Ալիխանովը ամեն ինչ արեց, որպեսզի ինքնակամ հեռանա Արզամասում ծրագրվող նոր, ավելի հզոր զենքի աշխատանքներից: Եվ այն բանից հետո, երբ հասկացավ, որ իր մտահղացումը ձախողված է, բացասական հաշվետվություն գրեց ծրագրի հեղինակ էլդովիչի աշխատանքի մասին:

Նրա գիտական վաստակը ահռելի է: Խորհրդային Միության Սոցիալիստական աշխատանքի հերոս, պետական մրցանակի եռակի դափնեկիր, ակադեմիկոս Ալիխանովի կողմից ստեղծվեցին ռեակտորներ՝ ծանր ջրի հիմքի վրա, բացասական ռեակտիվությամբ, որոնք սկզբունքորեն անհնարին էին դարձնում Չեռնոբիլյան տարբերակը: Նա աշխատանքներ սկսեց կոսմիկական ճառագայթների ուսումնասիրության բնագավառում, որն այսօր համաշխարհային գիտության գերակա ուղղություններից մեկն է: Առաջին պրոտոնային արագացուցիչը և առաջին սինխրոֆազոտրոնը նույնպես Ալիխանովի վաստակն է: Դասական են դարձել Ալիխանովի աշխատանքները ռենտգենյան ճառագայթների օպտիկայի, արհեստական ռադիոակտիվության, բետտա-ճեղքման, պոզիտրոնների և այլ տարրական մասնիկների սպեկտորի հետազոտության մասին: Պատահական չէ, որ հենց ակադեմիկոս Ալիխանովը նշանակվեց խորհրդային միջուկային ռումբի ստեղծմամբ զբաղվող Տեխնիկական կոմիտեի հատուկ խորհրդի գիտական-քարտուղար:

Սակայն գիտնականի կյանքի ուղին միայն վարդերով չէր զարդարված: Նրա ինստիտուտի խնդիրներից մեկը թորիումային ռեակտորի ստեղծումն էր: Այդ առաջադրանքը չկատարվեց: Սակայն այն չի իրականացվել նաև այսօր, ոչ մի տեղ աշխարհում: Ալիխանովը ծանր էր տանում անհաջողությունները և մանավանդ՝ վարչական կամայականությունները: Երբ 1960-ականների վերջերին նրա ստեղծած պրոտոնային արագացուցիչը տվեցին ուրիշ ինստիտուտի, նա, որ դեռ տարիքը չէր առել, բայց արդեն հիվանդ էր, այլևս չդիմացավ...

Աբրահամ Ալիխանովը սերված էր Պիտերի ֆիզտեխի Իոֆֆե հայրիկի նշանավոր դպրոցից: Դա գիտնականների այն սերունդն էր, որոնք ստեղծեցին խորհրդային գիտության փառքը:

Օժտվածների, տաղանդների անբացատրելի, անսովոր բռնկում էր դա: Պատմությունը նման օրինակներ գիտի, երբ, օրինակ, մի տեղ հանկարծ մեկը մյուսի ետևից փայլատակում են համաշխարհային մեծության աստղեր, ինչպես անտիկ ժամանակներում՝ փոքրիկ Աթենքում, Ռեզերֆորդի ժամանակների Քեմբրիջում և այլն:

Արդեն տարիքն առած, աշխարհահռչակ գիտնականներ և վաստակաշատ ակադեմիկոսներ, նրանք հաճախ էին հավաքվում Ալիխանովի ամառանոցում: Ալիխանովի այն բողոքներին, թե կինը չի թողնում իրեն մոտենալ էլեկտրասարքավորումներին, Կապիցան ծիծաղում էր. «Մի վշտանա, Ռեզերֆորդին էլ նրա կինը չէր թողնում անգամ նորոգել դռների փականները»: Լանդաուն, որ առանձնապես չէր սիրում երաժշտություն, Ալիխանովին հեգնում էր. «Չեմ հասկանում՝ ինչո՞ւ երգել, երբ կարելի է խոսել»:

Ողբերգական վթարից մի քանի ժամանակ առաջ Լանդաուն ասում էր Ալիխանովին. «Ես այնպե~ս, այնպե~ս եմ վախենում ֆիզիկական ցավից, որ եթե ինձ հանկարծ վիրահատեն, կճչամ, կգոռամ ողջ Մոսկվայով մեկ»:

Շատ ժամանակ չանցած մեծահռչակ Լանդաուն ահավոր ավտովթարի ենթարկվեց: Ալիխանովը տեղը չէր գտնում. նա վազում էր այս ու այն կողմ, օգնություն կազմակերպում ամենաբարձր օղակներում: Իսկ երբ վերադառնում էր հիվանդանոցից, նրա աչքերը արցունքներից կարմրած էին լինում:

Աբրահամ Ալիխանովը Լանդաուից հետո երկար չապրեց. ականավոր ֆիզիկոսին թաղեցին Մոսկվայի Նովոդևիչյե գերեզմանատանը:

*ԻՆՏԵՐՆԵՏԻՑ*

## ՀՀ Ազգային ժողովին

Ազգային ժողովի մեծարգո պարոն նախագահ: Գիտությունների ազգային ակադեմիայի Հայրենական պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի միասնական կազմակերպության պահանջով դիմում եմ Ձեզ մեզ համար շատ կենսական մի խնդրով:

Դուք և Օրինաց երկիր կուսակցությունը բազմիցս հայտարարել եք վետերանների և հաշմանդամների սոցիալական վիճակը բարելավելու ձեր վճռականությունը՝ բարձրացնելով նրանց թոշակները և արտոնությունները: Դա Ձեր նախընտրական ծրագրի կարևորագույն կետերից մեկն էր:

Վերջերս Ազգային ժողովը քննարկել և ընդունել է Օրենք՝ նշված խմբերի անձանց համար նախատեսված արտոնությունների դիմաց ամսական վճարել 3500 դրամ:

Այդ Օրենքով վերացվեց նշված անձանց տրանսպորտով ձրի երթևեկելու, ջրի, գազի և էլեկտրաէներգիայի ծախսերը 50 տոկոս վճարելու և անվճար սանատորական բուժման իրավունքները:

Նշենք, որ 3500 դրամ գումարը չի կարող բավարարել նույնիսկ տրանսպորտային ծախսերը (3500:30 = 115 դրամ):

Մեր Կազմակերպության անդամները գտնում են, որ նշված Օրենքը պետք է վերանայվի՝ վերականգնելով վետերանների, հաշմանդամների և այլ անձանց նախկինում ունեցած իրավունքները և արտոնությունները կամ պետք է կրկնապատկվի տրվելիք գումարը և վերականգնվի սանատորական ձրի բուժման իրավունքը:

Խնդրում ենք Ձեզ հաշվի առնել վետերանների պահանջները՝ հնարավորության սահմաններում նրանց սոցիալական վիճակը բարելավելու համար: Այդ կլինի մեծ նվեր պատերազմի հաղթական ավարտի 60-ամյակի նախօրյակին:

*Խորին հարգանքներով*
*Սամվել ՄԻՐԶՈՅԱՆ*
*ԳԱԱ Հայրենական պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի միասնական կազմակերպության նախագահ, պրոֆեսոր*

«Խիզախ զինվոր և ազնիվ աշխատավոր» այսպես է ներկայացրել «Գոլոս Արմենի» օրաթերթը Խորհրդային Միության հերոս, 81-ամյա պատերազմի և աշխատանքի վետերան, Հայաստանի պատերազմի և աշխատանքի վետերանների միության անդամ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի անդամ Ռուբեն Հակոբյանին 1994 թ. սեպտեմբերի 15-ի մահախոսականում: Բնութագրելով նրան, թերթը գրում է Ռուբեն Հակոբյանը սովորել է Պետերբուրգի ավտոճանապարհային ինստիտուտում, աշխատել է Կապանի մի շարք ձեռնարկություններում: Պատերազմի առաջին իսկ օրերին մեկնել է ռազմաճակատ, աչքի ընկել հերոսությամբ Ղրիմի ազատագրման մարտերում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1944 թ. մայիսի 16-ին արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Այսօր արդեն տաս տարի է, ինչ նա մեզ հետ չէ, սակայն բոլոր բնագավառներում, ուր նա աշխատել և գործել է, մնացել են թարի հիշողություններ:

Այսօր, օգտվելով առիթից, ցանկանում եմ ներկայացնել մի հազվագյուտ լուսանկար, որը կատարվել է 1944 թվականին, Մոսկվայում պատերազմի մի խումբ մասնակիցների Խորհրդային Միության հերոսի բարձր պարգևների հանձնման արարողությունից հետո, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինի հետ: Լուսանկարում պատկերված 26 պարգևատրվածների մեջ է Ռուբեն Հակոբյանը (Կալինինի թիկունքին կանգնած) և տանկային զորահրամանատար, գեներալ Ռիբալկոն (հետագայում մարշալ): Լուսանկարը իմ խնդրանքով ինձ տվեց Ռուբենի կին-այրին Մարիա Կոնստանտինովնան: Նա պատմեց, որ Ռուբենը պատերազմից հետո զբաղեցրել է մի շարք պետական պատասխանատու պաշտոններ, ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Համարվում է Ուկրաինայի Հանրապետության Ղրիմի թերակղզու Կարմիր Պերեկոպ քաղաքի պատվավոր քաղաքացի, նրա անունով է կոչված Պերեկոպի դպրոցը: Իսկ «Խորհրդային Հայաստան» թերթի 1944 թվականի սեպտեմբերի 3-ի համարում կարդում ենք Հայաստանի ութ միջնակարգ դպրոցները ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրելու մասին, դրանց թվում է Իջևանի շրջանի Իջևան գյուղի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորել է Խորհրդային Միության հերոս, ավագ լեյտենանտ Ռուբեն Հակոբյանը:

*Հենրիկ ԽԱՌԱՏՅԱՆ*
*Պատերազմի և աշխատանքի վետերան*

# «Գիտության և ոգու ասպետը»

...Հույսով ապրում էինք մենք այս աշխարհում
Թե ոչինչ, վաղը, մյուս օրը դեռ կա,
Մի իմաստություն էինք հաճախ մոռանում,
Որ այն, ինչ գնաց՝ երբեք ետ չի գա:

Այն, ինչ հեռու էր, մեզ լավ էր թվում,
Այն, ինչ վաղվա մեջ, երա՜զ բաղձալի,
Այսօրվա հրաշքը սովորական մի փաստ,
Իսկ ապրած օրը՝ դժգույն, տաղտկալի:

Եվ երբ հալչում է օրն այդ «տաղտկալի»,
Եվ երբ այն գիրկն է «երեկվա» անցնում,
Հանկարծ կսրուտի շունչը տանջալի,
Որդի պես բաքուն մեր սիրտն է կրծում:

*Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ*

«Անհատն իր ապրած ժամանակի ծնունդ է, այդ ժամանակի գաղափարախոսության և ժամանակի մտայնության կրողը: Սա սովորական անհատների մասին է: Սակայն անհատներ կան, որոնց ապրած և ապրվելիք կյանքը, մտահորիզոնը, հույզերը, երազանքների մոլորակի և նրա բնակիչների գալիք օրերը էլ ավելի կատարյալ տեսնելն է: Նման անհատները չեն ապրում միայն մեկ մարդու նախասահմանված կյանքով: Նրանք ապրելով այրվում են, այրվելով՝ ապրում: Նրանց համար չկա աշխատանքի ավարտ, հանգիստ կյանք...»:

Այս խոսքերը բնորոշում են ականավոր մտավորականներից մեկին, հանրահայտ բժիշկ-գիտնական, պետական և հասարակական ճանաչված գործիչ, առողջապահության հմուտ կազմակերպիչ Էմիլ Սամսոնի Գաբրիելյանին:

Այս ակնարկը գրելու գաղափարը ծնվեց գիտնականի մասին վերջերս լույս տեսած Անի Փաշայանի «Գիտության և ոգու ասպետը» գիրքը կարդալու ընթացքում, և ամրացավ նրա կյանքին, գործին ու անցած ուղուն ավելի մանրամասն ծանոթանալուն զուգահեռ: Էջ առ էջ, գլուխ առ գլուխ կարդալով այս գիրքը, ուր ամենայն մանրամասնությամբ նկարագրվում է գիտության և ոգու ասպետի անցած ուղին, մի խորին պատկառանք, ներքին հարգանք է ծնվում մեջդ:

Սպիտակ խաչի համաշխարհային միաբանության ասպետ, վաստակաշատ գիտնական, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանն այսօր արդեն անառարկելի գնահատված գիտնական է հայ և համաշխարհային բժշկագիտության մեջ: Նրա հիմնած Դեղագործակալությունը միջազգային լայն ճանաչման արժանացած կառույց է, գիտական մի նոր օջախ երիտասարդ գիտնականների համար: Հավանաբար քչերը գիտեն, որ նշանավոր գիտնականը նաև գրողհրապարակախոս է, դասական երաժշտության մեծ երկրպագու, հոգևոր մեծ ներաշխարհի տեր մարդ: Նա նաև գիտության մեծ մշակ է, անխոնջ ու անդադար, իր հանգիստ, բայց պատկառելի ու վստահ գործունեությամբ: Գիտնականն այսօր ղեկավարում է ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը, կազմակերպում ու անցկացնում առողջապահական զանազան գիտաժողովներ ու սեմինարներ:

«Գիտության և ոգու ասպետը» գիրքը կազմված է գլուխներից, ուր ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է գիտնականի կյանքն ու գործը: Գիրքը վերջում ունի նաև հավելված, ուր բավականին մեծ հարցազրույց կա վաստակաշատ գիտնական-բժշկի հետ: Իսկ աշխատության վերջում զետեղված են Էմիլ Գաբրիելյանի գործընկերների, հանրահայտ մարդկանց, ականավոր մտավորականների ու գիտնականների կարծիքները գիտության և բժշկության նվիրյալի մասին: •

*Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# Գյումրին՝ գիտական խոշոր կենտրոն

⇨1 ռանձին օրենքի ընդունումը, այնուամենայնիվ, տնտեսական առաջընթացը կապվում է լուրջ ներդրումների հետ, որը կարող է տեղի ունենալ միայն և միայն ազատ շուկայական տնտեսության տնտեսագիտական օրենքների շրջանակներում: Կարևոր ենք համարում նշել, որ ճիշտ է, քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում սեփականաշնորհվել են, սակայն այդ սեփականաշնորհումը չպետք է կրի ինքնանպատակ բնույթ: Յուրաքանչյուր ձեռնարկություն, այնուամենայնիվ, պետք է գտնի համապատասխան ձևեր և միջոցներ, թեկուզ փոքր ծավալներով գործունեություն ծավալելու համար: Եթե արդյունաբերական հիմնարկի ղեկավարությունը և կոլեկտիվը իր առջև այդ խնդիրը դնի (կարծում ենք, որ պետությունն էլ իր հերթին այդ լրջագույն պահանջը պետք է դնի սեփականաշնորհված հիմնարկների առջև), ապա անկասկած կարող են հասնել, ինչպես նշեցինք, թեկուզ փոքր ծավալի, բայց հասարակության համար էական նշանակության հաջողության (իսկ այդ օրինակը քաղաքում առկա է, ի դեմս «Քարհատ մեքենա» գործարանի): Նորից եմ ընդգծում,որ մեզ համար կարևորագույն խնդիր է, որ այդ արդյունաբերական գործարանները սկսեն աշխատել:

Երկրաշարժից անմիջապես հետո ԱՄՆ-ի կառավարությունը ցանկություն էր հայտնել Գյումրիում հաստատել Ամերիկյան համալսարան, ինչպես օրինակ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի Դաշնության կառավարությունները՝ միջնակարգ դպրոցների կառուցման առումով (որոնք հետագայում հաջողությամբ իրագործվեցին): Այդ ժամանակ Երևանի պետական համալսարանի ռեկտոր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանը պնդում էր, որ Ամերիկյան Համալսարանը պետք է կառուցել Գյումրիում, միաժամանակ բացահայտելով նրա կարևորագույն նշանակությունը երկրաշարժից կործանված քաղաքի հետագա վերածննդի գործում: Այդ կապակցությամբ բանակցություններ էին վարվում Կալիֆորնիայի համալսարանի պրեզիդենտի և ԵՊՀ ռեկտորի միջև (և՛ ԱՄՆ-ում, և՛ Հայաստանում): Համաձայնությունը փաստորեն կայացել էր: Սակայն հետագայում անհասկանալի պատճառներով Ամերիկյան համալսարանը հաստատվեց Երևանում: Որպես հիմնավորում տրվեց այն (համենայնդեպս ծավալվեցին այդպիսի խոսակցություններ), որ Գյումրին քանդված է, պայմանները բացակայում են, ինչպես պետք է համալսարանը Գյումրիում գործի: Կարծես ամերիկացիները անտեղյակ էին, որ երկրաշարժը Գյումրիում է տեղի ունեցել և այդպես անտեղյակ առաջարկ էին արել համալսարանը Գյումրիում հաստատել:

Հետագայում նույնպես մայրաքաղաքում հաստատվեցին ռուսական, ֆրանսիական կարևոր նշանակության ուսումնական հաստատությունները: Մենք, իհարկե, ողջունում ենք մեր հանրապետության համար այս լուրջ ձեռքբերումները: Այստեղ հարցադրումը նրանում է, թե ինչո՞ւ այդ ամենը Երևանում: Երևանում փաստորեն կենտրոնացված են հանրապետության, կարելի է ասել, բոլոր գիտական և կրթական լուրջ նշանակության հաստատությունները: Ինչքանով է դա ճիշտ, այդ մասին բազմիցս է խոսվել:

Մեկ այլ կարևորագույն հանգամանքի վրա էլ էր այն ժամանակ պնդում ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանը: Ըստ նրա, Գյումրիի վերականգնումը հենց սկզբից, պետք էր սկսել նրա կենտրոնի, հին քաղաքի միջուկի վերականգնումից, այնուհետև տարածելով շինարարական աշխատանքները նախաերկրաշարժյան քաղաքի մյուս ծավալներում: Մեզանում ըստ երևույթին չկա այն կուլտուրան, որ ասողին լսող է պետք: Եվ ինչ ստացվեց, քաղաքի վերականգնման աշխատանքների համար ընտրվեց միանգամայն հակառակ տարբերակը: Տարիներ հետո, ի վերջո հասկացանք, որ կատարվել է լուրջ սխալ (Սպիտակի պարագայում ևս) և, աստիճանաբար, վերադարձանք ճիշտ տարբերակին, որն ուղենշում էր ակադեմիկոսը: Արդյունքում ունեցանք հսկայական և նաև անդառնալի կորուստներ (ինչպես, օրինակ, Շիրակի դաշտավայրի հսկայածավալ բերրի հողերի կորուստը, էլ չենք ասում քաղաքաշինական առումով այժմ ծառացած լուրջ հիմնախնդիրները):

Ինչևէ, վերադառնանք Հայաստանի Ամերիկյան համալսարանին, որը Երևանից Գյումրի տեղափոխելը և Գյումրիում հաստատելը Գյումրիի համար ունի սկզբունքային նշանակություն:

Մեր ժողովրդի համար լուրջ նշանակության հանգամանք է որ Գյումրիում է հիմնավորված Ռուսական Դաշնության ռազմական բազան և Ռուսաստանի հյուպատոսությունը: Հավաստի տվյալներով Գյումրիում բացվելու է հայ-ռուսական պետական համալսարանի մասնաճյուղը: Ռուսական ներկայությունը և միաժամանակ Գյումրիում Ամերիկյան համալսարանի առումով ԱՄՆ-ի ներկայությունը որակական նոր իրավիճակ կստեղծի Գյումրիում: Այս պայմաններում քաղաքին էլ ավելի կսևեռվի Հայաստանի կառավարության ուշադրությունը, մարզային և քաղաքային իշխանությունները ավելի զգաստ կեցվածք կընդունեն և առավել լրջորեն և ինտենսիվորեն կզբաղվեն քաղաքի հիմնահարցերով: Քաղաքը կգտնվի ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների ուշադրության կենտրոնում: Այս ամենի արդյունքում քաղաքը անպայմանորեն ինտենսիվորեն կկերպարանափոխվի դեպի ժամանակակից լավագույն քաղաքի:

Հայաստանի Ամերիկյան համալսարանի շուրջ կհամախմբվեն Գյումրիի պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները: Նրանց մեջ կծավալվի լուրջ մրցակցություն և՛ կադրերի պատրաստման առումով, և՛ արևմտյան կրթական համակարգի արմատավորման առումով (որը փաստորեն մենք պետական մակարդակով արդեն որդեգրել ենք):

Կարևորագույն հանգամանք ենք համարում իսկական գիտական կյանքի աշխուժացումը: Գյումրիի բուհերում և գիտական հիմնարկներում գիտական հետազոտությունները ավանդաբար սերտորեն կապված են եղել Ռուսաստանում իրականացվող խոշորամասշտաբ գիտական ուսումնասիրությունների հետ: Այժմ արդեն տեղի բուհական և գիտական հիմնարկների գիտական կադրերը հնարավորություն կունենան շփվելու նաև ԱՄՆ-ի, այդ հզորագույն պետության գիտական համակարգի հետ: Ամերիկյան և ռուսական գիտական դպրոցների մրցակցությունը լուրջ հիմքեր կստեղծեն գիտության զարգացման համար: Այսպես, օրինակ, ՀՀ ԳԱԱ Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի գիտական ուղղվածությունը ավանդաբար կապված է Ռուսաստանի ԳԱ համապատասխան ինստիտուտների գիտական թեմատիկաների հետ, հայտնի է, որ Հայաստանի Ամերիկյան Համալսարանում, ինչպես բուն ԱՄՆ-ում, խորապես զարգանում է ինժեներական սեյսմոլոգիան: Սերտ առնչության մեջ են գտնվում նաև հարակից գիտությունները՝ մեխանիկան, սարքաշինությունը և այլն: Հետևապես պետք է ակնկալել միանգամայն ուրույն գիտական միջավայրի հաստատումը Գյումրիում: Առաջ կգան համատեղ գիտական ծրագրեր, կճշտվեն այն գիտական հիմնարար և կիրառական ուղղությունները, որոնք ռեալ կերպով հնարավոր կլինի զարգացնել Գյումրիում: Աստիճանաբար քաղաքում գործող գիտական կենտրոնները նորովի ձեռք կբերեն իրենց ուրույն, ժամանակակից նկարագիրը, գիտական աշխարհին հանդես կգան որպես առավել հասուն գիտական կենտրոններ, գիտական կյանքը էապես կինտեգրի համաշխարհային գիտական կյանքին: Անպայմանորեն քաղաքը իրեն կնգի հայրենիքի և սփյուռքի գիտական շրջանակներին, երիտասարդ մասնագետներին: Քաղաքում կունենանք համահավաք լուրջ մտավորականություն, որն իր վրա կվերցնի քաղաքի հետագա զարգացմանն ու բարգավաճմանը ուղղորդվող միտքը: Այս ամենով հանդերձ, վաղ թե ուշ, Թուրքիայի կողմից սահմանի բացումով Գյումրին կվերածվի տարածաշրջանային իմաստով լուրջ գիտական և կրթական կենտրոնի և բնականորեն առաջ կբերի իր յուրահատուկ հետաքրքրությունը: Քաղաքը իր նշանակությամբ էականորեն կբարձրանա և պարզ է, որ միաժամանակ կնպաստի ներդրումային՝ փոքր և միջին ձեռնարկչական գործունեության աշխուժացմանը:

Որո՞նք են մեր պետության ներկա ժամանակահատվածի գերխնդիրները: Դա նախ և առաջ ղարաբաղյան հիմնահարցի վերջնական լուծման հասնելն է: Այնպիսի լուծման, որն արժանապատիվ լինի ցեղասպանություն տեսած, Արցախի՝ պարտադրված պատերազմում հաղթանակած մեր ժողովրդի համար: Համահավաք ուժերով, պետական ծրագրային քաղաքականությամբ պետք է կարողանալ արագ վերացնել երկրաշարժի և սահմանային գոտիներում պատերազմի հետևանքները: Կարճ ժամանակում պետք է կարողանալ ստեղծել ենթաստրուկտուրային, սերվիսի, կյանքի ժամանակակից պայմաններ՝ հավասարապես և՛ մայրաքաղաքում, և՛ մարզերում: Պետական ծրագրավորված քաղաքականությամբ պետք է կարողանալ հավասարաչափ զարգացնել մեր հանրապետության բոլոր տարածաշրջանները (նկատի ունենալով յուրաքանչյուրի ուրույն յուրահատկությունները): Կարևոր ենք համարում նշել, որ մեր երկրին օգտակար լինելու հարցերում, մեր պետությունը հավասար հնարավորություններ պետք է ստեղծի մեր հանրապետությունում գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության և Եվրամիության համար: Իհարկե, հավասարապես և շահագրգիռ համագործակցելով նաև մեր անմիջական հարևան և այլ պետությունների հետ:

Իսկ եթե, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի կառավարությունը նպատակահարմար գտնի, որ համալսարանի համալիրի ֆինանսավորումը կիսով չափ իրականացնի, իսկ մյուս կեսը՝ մեր կառավարությունը, ապա մեր կարծիքով, այս տարբերակին էլ կարելի է համաձայնվել և որևէ վարկային ծրագրով աշխատել կատարել այդ պարտավորությունը, որովհետև արդյունքները միմիայն մնայուն են և սկզբունքային նշանակության:

Ինչ վերաբերում է կյանքի պայմաններին, ապա այն մեր կարծիքով չպետք է հիմնավոր պատճառ ծառայի Հայաստանի Ամերիկյան Համալսարանը Գյումրի չտեղափոխելու համար: Այդ կյանքի պայմանները մեր ռեալ իրականությունն են, դրանք վերաբերում են մեր ողջ հասարակությանը: Գյումրիի մտավորականությունը երկրաշարժից հետո, կարելի է ասել, չլքեց քաղաքը, իր ժողովրդի հետ միասին նա տանում է կյանքի այդ պարտադրված լրջագույն դժվարությունները (դրանք երկրաշարժի հետևանքով ստեղծված իրավիճակն է, գումարած՝ տնտեսական այս դժվարին անցումային փուլի առաջադրած պայմանները): Այս դժվարին պայմաններում քաղաքի բուհերում, գիտահետազոտական ինստիտուտներում, հատուկ կոնստրուկտորական բյուրոներում, պրոբլեմային լաբորատորիաներում, հայագիտական-երկրագիտական կենտրոններում անտրտունջ աշխատում և ստեղծագործում են շուրջ 30 գիտության դոկտորներ, պրոֆեսորներ, շուրջ 300 գիտության թեկնածուներ, դոցենտներ, ինժեներատեխնիկական մտավորականության բավականին մեծ բանակ: Կարծում ենք, որ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի կոլեկտիվը, որը կոչված է հասարակության համար որոշակի խնդիրներ և նպատակներ իրագործելու, նույնպես կապրի և կգործի այն պայմաններում, ինչ որ Գյումրիի մտավորականությունը և ողջ հասարակությունը: Երբ կառուցվի համալսարանի ողջ համալիրը (իսկ դա պետք է կառուցել առանձին մի տարածքի վրա իր ամբողջական և ամփոփ ներկառուցվածքով, որի հնարավորությունը մեր կարծիքով առկա է նոր Գյումրիի հսկայածավալ տարածքներում), այդ դեպքում հիմնականում կյանքը կմտնի առավել լավագույն պայմանների մեջ:

Կարծում ենք, վերջին երկու-երեք տարվա քաղաքում ծավալված շինարարական հսկայածավալ և արդյունավետ աշխատանքը կարող ենք համարել Գյումրիի հիմնախնդիրների լուծման սկզբունքային նշանակության առաջին ժամանակահատվածը: Վստահությամբ ակնկալում ենք, որ ՀՀ նախագահը, լուրջ նախապատրաստական աշխատանքների և ուսումնասիրությունների հիման վրա կուրվագծի մեր քաղաքի կառուցման և զարգացման հաջորդ և որոշիչ ժամանակահատվածային փուլը, որի արդյունքում Գյումրին կվերհառնի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական առումով լուրջ գիտակրթական, մշակութային, աշխույժ առևտրի և բիզնեսի նշանակալի և հետաքրքիր կենտրոնի:

*Խորին հարգանքով*
*Սամվել ՍԱՐԳՍՅԱՆ*
*Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Մաթեմատիկական անալիզ և դիֆերենցիալ հավասարումներ» ամբիոնի վարիչ*

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՇԽԱՐՀԸ

Ապահով մանկություն

- Աղջի, իմացե՞լ ես...

- .....

- Վա՜յ, վա՜յ, վա~յ... էս ինչ ա կատարվում:

# «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ.

## բնապահպանական պրոբլեմներ...

*«...Յուրաքանչյուր որ ունի խոսքի ազատության իրավունք՝ անարգել տեղեկություններ ... ստանալու ... ազատություն...»*

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, Հոդված 24

«Ներկայիս և ապագա սերունդների յուրաքանչյուր մարդու իրավունքի՝ ապրել շրջակա միջավայրում, որը բարենպաստ է նրա առողջության և բարեկեցության համար, ...յուրաքանչյուր կողմը երաշխավորում է տեղեկատվության մատչելիության իրավունք, հասարակայնությանը՝ որոշումների ընդունման գործընթացի մասնակցության ... իրավունք՝ շրջակա միջավայրի հետ կապված հարցերով...»:

*ՕՐՀՈՒՍԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ, Հոդված 1*

### Նախապատմություն

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC CAUCASUS) ՁԼՄ-ների և հասարակայնության հետ կապերի ծրագրի շրջանակներում, Եվրախորհրդի աջակցությամբ լրագրողների համար կազմակերպվեց երկրորդ մեդիա-տուրը: Ուղղությունը Դիլիջանն էր, նպատակը՝ տեղում Դիլիջանի բնապահպանական հիմնախնդիրներին ծանոթանալն էր, տեղի պաշտոնյաներից և ծրագրի փորձագետներից անհրաժեշտ բոլոր տվյալների ստացումը, իսկ վերջնական ակնկալիքը՝ ՁԼՄ-ներում այդ պրոբլեմների արծարծումը, հասարակայնությանը շրջակա միջավայրի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն տալը:

### Պետական արգելոց, թե՞ Ազգային պարկ

«Դիլիջան» ազգային պարկի ընդհանուր տարածքը 28 հազար հեկտար է, բաժանված է մի քանի գոտիների: Ծրագրի փորձագետ, ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտի գիտաշխատող Էվելինա Ղուկասյանը փաստում է, որ որպես պետական արգելոց՝ Դիլիջանի արգելոցը երբեք չի համապատասխանել իր կարգավիճակին, քանի որ պետական արգելոցներում արգելված է տարբեր տեսակի բնակավայրերի գոյությունը, գազատարի, երկաթգծի առկայությունը, բարձր լարման հոսանքատար գծերը, ինչն առկա է եղել այստեղ՝ արգելոց համարվող այս տարածքում:

Փաստենք, որ «Դիլիջան» ազգային պարկը նախապես ստեղծվել է որպես պետական արգելոց և նպատակ է ունեցել պահպանել Հյուսիսային Հայաստանի կաղնու և հաճարենու կովկասյան տիպի անտառները, ինչպես նաև մեզոֆիլ անտառային լանդշաֆտները: Հետագայում, սակայն, պարզ է դառնում, որ արգելոցը հարուստ է կենսաբազմազանությամբ և առաջ են գալիս նոր խնդիրներ՝ բուսական և կենդանական աշխարհի հատուկ տեսակների պահպանության հետ կապված: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ արգելոցի տարածքում տնտեսական գործունեությունն անխուսափելի է, արգելոցը 2002թ. վերափոխվեց Ազգային պարկի:

Բավականին հետաքրքիր բուսական աշխարհ ունի Դիլիջանի պետական արգելոցը: Այստեղ հայտնաբերված են ավելի քան 900 բուսատեսակներ, որոնցից 40-ը անհետացող կամ անհետացման եզրին գտնվող բուսատեսակներ են, իսկ 29-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Այստեղի հազվագյուտ, երրորդ դարաշրջանի բուսատեսակներից են, օրինակ, կենին, կովկասյան մրտավարդը և այլն: Տարիներ առաջ փորձ է արվել կլիմայավարժեցնել վարազը և ուսուրական եղջերուն: Փորձագետը փաստում է, որ Հաղարծինի ձորում մեծ հաջողություն է արձանագրվել հատկապես վարազի կլիմայավարժեցման աշխատանքների ուղղությամբ. «այստեղ բերված 60 կենդանիները մեծ հաջողությամբ բազմացել են ու մինչ այսօր էլ պահպանվում են»: Իսկ ուսուրական եղջերուների 130 առանձնյակներից, է. Ղուկասյանի խոսքով, մի քանի տարի անց կենդանաբանների կողմից արդեն գրանցվել էին 380-ը: Իսկ թե ներկա պահին վիճակն ինչպիսին է, փորձագետը դժվարացավ ասել, քանի որ վերջին տարիներին գիտական հետազոտություններ ու ուսումնասիրություններ, մեղմ ասած, չեն իրականացվում ֆինանսների բացակայության պատճառով:

*...Եվ կարվելուց հետո է միայն երևում ծառի բուն հատությունը...*

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

«Դիլիջան» ազգային պարկի գլխավոր անտառագետ Սուրեն Աղաջանյանի խոսքով՝ 90-ական թվականների ցուրտ ու մութ տարիներին Դիլիջանի տարածքում, ի տարբերություն մեր հանրապետության մյուս բնակավայրերի, մասսայական անտառահատումներ չեն կատարվել: Իհարկե, կան հատվածներ, ուր, ըստ Աղաջանյանի, անտառի խտությունը 0,9-ից իջել է մինչեւ 0,6-ի, անգամ կան հատվածներ, ուր այն հասել է մինչև 0,2 խտության, սակայն «մասսայական անտառահատումներ այստեղ չեն եղել»: Գլխավոր անտառագետը սա կապում է այն բանի հետ, որ Դիլիջանի անտառների վրա երբեք պլաններ չեն եղել դրված:

### Ձեռքդ ետ տար ցավի վրայից...

Իսկ աչքը տեսածից է վախենում: Շրջելով Դիլիջան ազգային պարկի ⇨ 6

# Ազգային միասնության գաղափարը՝ գործունեության հիմք

⇨ 2 միասնական ազգային մշակույթի գաղափարը»,- դարձյալ նշում է պարոն Եղիազարյանը:

Հաջորդ աշխատությունը, որը պատրաստվում է հրատարակել ինստիտուտը, կոչվելու է «Հայ գրականությունը համաշխարհային զարգացման համատեքստում»: Այս ուղղությամբ արդեն աշխատում են ակադեմիկոս Արամ Գրիգորյանը, դոկտորներ Ելենա Ալեքսանյանը, Զավեն Ավետիսյանը և ուրիշներ: Աշխատությունը լուսաբանելու է քսաներորդ դարի համաշխարհային գրական զարգացումը և հայ գրականության մասնակցությունը այդ գործընթացին: Պատմությունը ցույց է տալիս, որ մեր կապը համաշխարհային գրականության հետ եղել է շատ ինքնատիպ: Այս առումով պարոն Եղիազարյանը առանձնացնում է խորհրդային շրջանում որդեգրած լավատեսական գաղափարախոսությունը, որը կյանքի զարգացումը ներկայացնում էր վերընթաց գծով: Այլ խնդիր է, թե դա որքանով էր համապատասխանում կյանքի զարգացման բուն իրողություններին: Ըստ գիտնականի հայերը չէին կարող շատ հոռետես լինել, որովհետև և Սփյուռքում, և այստեղ հայրենիքի խնդիր կար, և բոլորն էին մտածում այդ հայրենիքի մասին: Այս և մի շարք այլ պատճառներ կաշկանդում էին հայ արվեստագետի ազատությունը: Այս ընթացքում Խորհրդային Հայաստանում ոչ ոք չէր կարող արձագանքել արևմտյան գրականությանը Պրուստի, Կաֆկայի և այլոց երկերին, որոնցում առավելապես իշխում էր հոռետեսական տրամադրությունը: Այս ամենով հանդերձ, հիշյալ տարիներին ստեղծագործեցին Չարենցը, Բակունցը, Դեմիրճյանը, Զորյանը, որոնց անունները նույնացվում են գեղարվեստական բարձր արժեքների ու պատմական թռիչքի հետ: Պատերազմական սերնդի բանաստեղծությունը, ի դեմս Շիրազի, Սահյանի, Կապուտիկյանի, Էմինի, Դավթյանի և այլոց, մի նոր որակ հաղորդեց մեր գրականությանը, որը շարունակեց հարատևել նաև Սփյուռքում, շնորհիվ Համաստեղի, Շահնուրի, Վազգեն Շուշանյանի, Հակոբ Օշականի, Կոստան Զարյանի և այլոց:

Ութսունականների վերջից մինչև մեր օրերը գրականությունը համարվում է մշակութային զարգացման մի նոր փուլ, որն էականորեն տարբերվում է նախորդներից: Առայժմ պետք է զերծ մնալ միանշանակ գնահատական տալուց, քանի դեռ կա բյուրեղացման ընթացք: Չնայած արդեն կան անուններ, որոնք կայուն տեղ ունեն արդի գրականության մեջ:

Գրականության ինստիտուտի պլանների մեջ է Հովհաննես Թումանյանի կյանքի ու գործունեության տարեգրության և թումանյանական հանրագիտարանի ստեղծումը: Ազգային մեծ բանաստեղծի գործունեությունն ու ժառանգությունը մնում են ինստիտուտի ուշադրության կենտրոնում: Աշխատանքները կատարում են դոկտորներ Վլադիմիր Կիրակոսյանը, Լուսիկ Կարապետյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Հասմիկ Աբեղյանը, Սուսաննա Հովհաննիսյանը և ուրիշներ:

Ինստիտուտի ոչ պակաս կարևոր գործառույթը միջազգային կապերի ուժեղացումն է: Կազմակերպվել են մի շարք գիտաժողովներ հանրապետությունում և արտերկրում: Հունիսի 23-24-ին Մոսկվայում կազմակերպվեց Նարեկացու հազարամյակին նվիրված գիտաժողով ԴԳԱ Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համատեղ: Նոյեմբեր ամսին Հալլե Վիտտեմբերգ համալսարանում գերմանացի գիտնականների հետ համատեղ նախատեսվում է անցկացնել միջազգային գիտաժողով նվիրված հայ և գերմանական միջնադարյան գրականություններին: Այսպիսով, շարունակվում է նախորդների ժամանակավորապես ընդհատված գործը հայ գրականությունը միջազգային ասպարեզում ներկայացնելու ուղղությամբ:

*Գրիգոր ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ*

# «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

⇨5 տարածքում ուղղակի չես կարող չտեսնել, որ երբեմնի խիտ ու հարուստ անտառների շատ հատվածներ նոսրացել են այնքան, որ բազմաթիվ հատվածներում ծառերի արանքներում բացատներ են գոյացել: «Մեծերը սիրում են թվերով խոսել»,-կասեր Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի հանրահայտ հերոսը: Սակայն թվերից խուսափել այս դեպքում անհնար է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն 2002-2003թթ.Հայաստանում օգտագործվել է մեկ միլիոն խորանարդ մետր փայտ...

Իսկ անտառային գոնե եղած ռեսուրսները պահպանելը անապատացման վտանգն աչքի առաջ ունեցող Հայաստանի համար այսօր կենսական խնդիր է: Փաստենք, որ Հայաստանի անտառապատ տարածքները կազմում են մոտավորապես 11 տոկոս: Օպտիմալ անտառապատման ընդունված նորման պահանջում է, որ այն լինի առնվազն 20 տոկոս: Իսկ սա նշանակում է, որ մենք այսօր Հայաստանում ունենք այդ օպտիմալ նորմայի կեսը միայն:

Թվերն երբեմն իսկապես խոսուն են:

## Ընդամենը 12.000դրամ հայրենի անտառների պահապաններին

Դիլիջանում ներկայումս արգելված չէ թափուկների շահագործումը: Եվ հենց այս է պատճառը նաև, որ ապօրինի հատումները Դիլիջանում, Սուրեն Աղաջանյանի հավաստմամբ, գրեթե վերացել են: Ըստ նրա՝ թափուկների շահագործումը թույլատրելը ճիշտ որոշում էր: Մեկ խորանարդ մետր թափուկի համար պետությունը սահմանել է 2400 դրամ: Անտառագետը կարծում է, որ եթե թափուկների շահագործումը արգելվեր, ապա մարդիկ ստիպված կգնային ծառահատումների, և այն էլ՝ մեծ մասշտաբներով:

Ապօրինի հատումները նվազել են նաև այն պատճառով, որ բավականին բարձրացել են ծառերը կտրելու համար նախատեսված տուգանքների չափերը: Հետո գազաֆիկացվել է Դիլիջանի գրեթե ողջ տարածքը: Եվ այս ամենի հետևանքով՝ նախորդ տարիների հետ համեմատած, ըստ գլխավոր անտառագետի, գրեթե տասն անգամ նվազել են ապօրինի ծառահատումները:

«Դիլիջան» ազգային պարկն այսօրվա դրությամբ ունի 45 անտառապահ, որոնք ամսական ստանում են, ծիծաղելի չլինի ասելը, 12 հազար դրամ աշխատավարձ: Լրագրողների այն հարցին, թե «12 հազար դրամ ստացողը ինչպե՞ս կարող է անտառը պահել ու չգնալ ապօրինությունների», գլխավոր անտառագետը պատասխանեց, թե գյուղացու ապրուստը միայն դա չի, նա ունի անասուն, հողատարածք և այլն, և հետո «գյուղում աշխատանք չկա, իսկ եթե լինում է՝ աշխատանքի ընտրություն չկա»:

Իսկ թե որքանով են հավաստի այս տվյալները, մանավանդ եթե հաշվի առնենք, որ գիտական լուրջ հետազոտություններ ու ուսումնասիրություններ այստեղ չեն կատարվում 90-ական թթ. սկզբներից ի վեր, դժվար է ասել:

## Փրկել, թե՞ չփրկել...

Նշենք նաև, որ բացի ապօրինի անտառահատումներից, «Դիլիջան» ազգային պարկն ունի նաև այլ խնդիրներ:

«Դիլիջան» ազգային պարկի առջև այսօր ծառացել է կենու պուրակի ներկայիս վիճակը: Կենին ռելիկտային, երրորդ դարաշրջանի բուսատեսակ է, ապրում է մինչև 1000 տարի: Դիլիջանի կենու պուրակում, որը զբաղեցնում է մոտ 25 հեկտար տարածություն, այսօրվա դրությամբ, ըստ Էվելինա Ղուկասյանի, բնական վերարտադրման գործընթաց չի ընթանում, այստեղ կարելի է հանդիպել մինչեւ 500-550 տարեկան ծառերի: Կենին աճում է հիմնականում լայնասաղարթ անտառներում՝ մյուս ծառերի հետ միասին: Եվ նրանց սաղարթների հետևանքով առաջացած թաղիքը թույլ չի տալիս, որպեսզի կենու սերմերը հասնեն հողին և նոր ծիլեր արձակեն: Իսկ կենու պուրակը գտնվում է արգելոցային գոտում և բնական է, որ այստեղ մարդու ցանկացած միջամտությունն արգելվում է: Եվ հիմա գիտնականներն այս հարցում կանգնած են փաստի առջև. «մի կողմից խիստ մեծ է ցանկությունը՝ փրկելու և պահպանելու այս ռելիկտային բուսատեսակը, դրա հետ նաև՝ փրկելու պուրակը ծերացումից, մյուս կողմից, եթե միջամտենք, ապա բնական զարգացման ընթացքը խախտած կլինենք»:

## Ականջդ բեր՝ ասեմ...

Պ. ՍԵՎԱԿ

Արդեն 15 տարի է, ինչ Ազգային պարկին տրանսպորտային ոչ մի միջոց չի հատկացվել: Ֆինանսների բացակայության պատճառով անտառշինարարական աշխատանքներն այստեղ վերջին անգամ կատարվել են 1985-86թթ: Էվելինա Ղուկասյանը իրավացիորեն փաստում է, որ միայն անտառշինարարական աշխատանքների արդյունքում կարող է պարզ դառնալ, թե այսօր ինչ խտության անտառ է մնացել Դիլիջանում, որքան է անտառն իրականում տուժել այս տարիներին և ընդհանրապես՝ ինչ ունենք մենք այսօր: Ըստ փորձագետի՝ խիստ արդիական է նաև սահմանների ճշգրտման, գոտիավորման, քարտեզագրման աշխատանքների կյանքի կոչումը:

Փորձագետը տեղեկացրեց նաև, որ դեռևս 2 տարի առաջ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Չքավորության դեմ պայքարի» ծրագրի «Հատուկ պահպանվող տարածքների բարելավում» ենթակետով Դիլիջանում և Սևանում պետք է սկսվեր մի լայնամասշտաբ ծրագիր: Ծրագրով նախատեսվում էր բարեկարգել Սևանի և Դիլիջանի ազգային պարկերը: Ծրագրի տեղդեռային փուլն ավարտվել է հունիսին: Ղուկասյանի տվյալներով՝ շահել է ֆրանսիական ինչ-որ կազմակերպություն, որը ծրագիրը պետք է իրականացնի հայկական կողմի հետ համատեղ: Նա նաև տեղեկացրեց, որ վերոհիշյալ ծրագրով նախատեսվում են հսկայական ներդրումներ. «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերը պետք է զինվեն համապատասխան նյութատեխնիկական բազայով, պիտի համալրվեն տեխնիկայով, անասուններով և փոխադրամիջոցներով: Փորձագետը հույս ունի, որ եթե ծրագիրն իրականացվի բարեխղճորեն, երկու ազգային պարկերն էլ մեծ օգուտ կստանան: Բայց նա նաև փաստում է. «Ես կնախընտրեի, որ այս ծրագիրը հիմնականում իրականացվեր հայ մասնագետների ջանքերով, քանի որ հսկայական գումարներ են ծախսվելու միայն դրսից մասնագետներին հրավիրելու, նրանց տեղի խնդիրներին ծանոթացնելու, ուսումնասիրություններ անցկացնելու վրա»:

Իսկ որ մասնագետներ մենք ունենք, դա անժխտելի է: Մնում է ունեցածը ճիշտ գնահատել և այն էլ՝ ժամանակին:

*Նարինե Վարդանյան*

---

Տատյանա ⇨1
**ԲԱՏԵՆԵՎԱ**

# Գիտնականներն ապացուցեցին կաթնասունների բազմացման նոր հնարավորությունը

ԿԱՏԱՐՎԵՑ անարատ բեղմնավորում, առայժմ՝ մկների ու ձկների...

Տղամարդիկ կարող են հանգստանալ. աշխարհում առաջին անգամ կենսունակ սերունդ է ստացվել առանց հոր մասնակցության: Ճապոնական և կորեական գենետիկները (ծագումնաբանները) պրոֆեսոր Տոմոհիրո Կոնոի ղեկավարությամբ հասան գիտական նշանավոր հաջողության. Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանի լաբորատորիայում երկու մայր մկների ձվաբջիջների միաձուլումից մկներ ծնվեցին... Մինչ այժմ ոչ սեռական ճանապարհով բազմանում էին միայն բույսերն ու ցածրակարգ կենդանիները:

Մարդու սովորական բջիջների միջուկում կա 46 քրոմոսոմ: Ի տարբերություն դրա՝ սեռական բջիջները, սպերմատազոիդները և ձվաբջիջները, պարունակում են 23-ական քրոմոսոմներ: Նրանց միաձուլումից ստացվում է բջիջ՝ գամետաքրոմոսոմային լրիվ հավաքածուով, որը և նոր կյանքի սկիզբն է դնում: Այս ձևով են ծնվում մնացած բոլոր կաթնասունները:

Պարտենոգենեզը (միասեռ ուղիով բազմացումը) գոյություն ունի միջատների, որոշ ձկների, սողունների, բայց ոչ երբեք՝ կաթնասունների մոտ: Կաթնասունների պարտենոգենեզի ուղղությամբ գիտափորձեր են կատարվում աշխարհի բոլոր գիտական կենտրոններում: Նպատակը ոչ այնքան գործնական է (չնայած գյուղատնտեսության մեջ բազմացման նոր միջոցի կիրառումը չափազանց հրապուրիչ է), որքան գիտական: Բնությունը երևույթների նման զարգացման վրա հատուկ փականք է դրել, դա գենային իմպրինտինգն է: Դա նշանակում է, որ մայրական քրոմոսոմների մեջ «անջատված» են սաղմի նորմալ զարգացման որոշ կարևոր գեներ, իսկ հայրական քրոմոսոմներում՝ այլ: Եվ միմիայն նրանց միաձուլումն է ստեղծում լրիվ ծրագիրը, առանց որի չի կարող ոչ մի սաղմ նորմալ զարգանալ:

- Գենային արգելքը հաղթահարելու փորձերը չեն դադարել այս վերջին տարիներս, բայց մինչև օրս անարդյունք էին,- հայտարարեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր գենետիկայի ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալ, կենսաբանական գիտությունների դոկտոր Եվգենի Պլատոնովը:- Հավանաբար հենց իմպրինտինգի հետ է կապված կաթնասունների կլոնավորման հիմնական դժվարությունները: Մենք անկեղծորեն ուրախ ենք ճապոնացի գործընկերների հաջողության համար, դա լուրջ նվաճում է:

Ընդհանուր գենետիկայի ինստիտուտի գիտնականները նույնպես աշխատում են պարտենոգենեզի ուղղությամբ. գենետիկայի զարգացման լաբորատորիայում ստացան մկների սաղմեր, որոնք ապրում են մինչև 19 օր (մկների հղիությունը տևում է 20-21 օր): Բայց ճապոնացիների գործադրած գենային նոկաուտի (հաղթահարում) մեթոդը ավելի արդյունավետ եղավ: Էությունն այն էր, որ մի ձվաբջիջը բեղմնավորում էին մեկ ուրիշով, նախապես այն նմանեցնելով սպերմատոզոիդի: Դրա համար նրա մեջ «փորում» էին ԴՆԹ-ի մի փոքր տարածություն, որից հետո ակտիվացվում էին երկու «հայրական» գեներ, որոնք սովորաբար ձվաբջիջում սկսված են: Գիտնականների համար հետաքրքիր էր նաև այն հանգամանքը, որ այդ նպատակների համար վերցվում էր ոչ թե հասուն, այլ նորածին մկնիկի ձվաբջիջը, որի (մկնիկի) ոչ բոլոր «մայրական» գեներն են ակտիվ: 457 փորձերից միայն երկուսը հաջողվեց, բայց դա էլ էր սենսացիա:

Գենետիկների հաջողությունը մեզ դարձնում է դեպի այն թեմաները, որոնք, թվում է, վաղուց դուրս են մնացել գիտության տեսադաշտից: Օրինակ, հին և հանդուգն այն վարկածը, թե անարատ ծնունդ Քրիստոսը իրականում կին է եղել՝ պարտենոգենեզի դեպքում կարող են միմիայն կանացի սեռի արարածներ ծնվել, որովհետև տղամարդկային իգրեկ քրոմոսոմներ սերնդի մեջ չկան:

- Հնարավոր է, որ այժմ կարող ենք այլ կերպ դիտարկել ամազոնուհիների ցեղի գոյությունը,- կատակում է Վյաչեսլավ Տարանտովը՝ ՌԳԱ մոլեկուլյար գենետիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալը:- Չէ՞ որ, եթե պարտենոգենեզը հնարավոր է լաբորատոր պայմաններում, ինչո՞ւ նման բան չի կարող պատահել մարդու մեջ պատահական մուտացիայի արդյունքում:

Բայց, թող տղամարդիկ չշտապեն վշտանալ: Առանց նրանց մասնակցության երեխաների ծնունդի մասին չարժե նույնիսկ խոսել: Եվ հետո՝ թափով գիտափորձեր են կատարվում նաև առանց իգական սեռի մասնակցության սերունդ ստանալու վերաբերյալ: Դա էլ կոչվում է անդրոգենեզ: ՌԳԱ Կոլցովի անվան կենսաբանության ինստիտուտում ձկների վրա այդ գիտափորձերը կատարում են կենսաքիմիական սաղմնաբանության լաբորատորիայի ավագ գիտաշխատող Աննա Գրունինան և գործընկերները: Չկնկիթից անջատում են էգի գենետիկական նյութը և նրա սաղմով բեղնավորում են երկու արուի: Միաձուլվելով, սպերմատազոիդները կազմում են նորմալ սաղմնաբջիջներ, որոնցից աճում են երկու սեռերի ամենասովորական ձկներ:

Այդ գիտափորձի մեջ հազվադեպը կամ եզակի երևույթն այն է, որ թառափազգի սերյուգայի ձկնկիթից մեր գիտնականներն աշխատում են առաջինը ստանալ ձկան այլ տեսակ՝ թառափ, որն իր չափերով բավական խոշոր է «մայրիկից»: Ճշմարիտ է, գիտնականները ստիպված չեն հաղթահարելու ձկների գենային իմպրինտինգը, բայց գլխավորը՝ գործի սկիզբն է:

*Թարգմանությունը՝ Ջ. ՉԱՏԻՆՅԱՆԻ*

-Ես նույնպես հայր չունեմ...

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՐԵԱԿԱՆԵՐՈՒՄ

## «Խոկուլեայի» արշավախումբը

ԵՐԿՀԱՐԿԱՆԻ գեղեցկուհի «Խոկուլեան» հանգիստ լողում է Խաղաղ օվկիանոսի ծփանքի մեջ: Թեև Խաղաղ է նրա անունը, բայց օվկիանոսը նաև բավականին անհանգիստ է լինում: Այդ հաշվի են առել հին դարերի նավաշինարարների փորձն ուսումնասիրած այսօրվա նավաշինարարները: Չէ որ «Խոկուլեի» նախագծողները կրկնել են հնագույն ինժեներների սկզբունքները:

Հին նավաշինարարների կառույցը 1200 տարի առաջ հնարավորություն տվեց պոլինեզցիներին հատել Խաղաղ օվկիանոսը և հասնել Հավայան կղզիներ:

Այդ հոբելյանի առիթով հավայցի մի խումբ նավաշինարարներ, պատմաբաններ և նավաստիներ ստեղծեցին ծովագնացների մի ընկերություն, որն էլ հնագույն նախագծերով կառուցեց 18 մետրանոց մի նավ և այն անվանեց «Խոկուլեա» («Խոկուլեա» կամ «Ուրախության աստղ» - դա զենիթում գտնվող Արկտուր աստղի պոլինեզյան անվանումն է): Նավաշինարար գիտնականները որոշեցին կրկնել իրենց նախնիների ճանապարհորդությունը և անցնել Հավայից մինչև Թաիթի 5000 կիլոմետր ճանապարհը: Նրանց ուղեցույցը ժամանակակից տեխնիկան չէր, այլ, ինչպես իրենց նախնիներինը, նրանք կողմնորոշվում էին միայն աստղերով:

Եվ ահա, «Խոկուլեա» նավը, հաղթահարելով օվկիանոսի ալիքները և կողմնորոշվելով աստղերով, մոտենում է Թաիթիին: Հազարավոր թաիթցիներ ցնծալից ընդունելություն են ցույց տալիս նավագնացներին: Տեղին է ասել 1200 տարվա ընթացքում թեև փոխվել են նավաշինարարության միջոցներն ու տեխնիկան, նույնն է մնացել աստղալից երկինքը, որն էլ օգնեց ժամանակակից նավագնացներին հաջողությամբ կրկնելու իրենց հեռավոր նախնիների ճանապարհորդությունը:

# Կորսված փապանի որոնողը

**Ի՞նչ կմտածեք դուք մի մարդու մասին, որը գտել է Արթուր թագավորի Կլոր սեղանը, կամ, ասենք Տրոյական ձիուն: Լավագույն դեպքում նրան կատակասերի մեկը կհամարենք, կամ ավելի ճիշտ՝ աննորմալ: Նման մի «աննորմալ» այժմ ապրում է Իտալիայում, և իր իսկ խոսքերի համաձայն, գտել է ոչ թե սեղան, կամ ինչ-որ ձիուկ, այլ, ոչ ավել, ոչ պակաս՝ Նոյյան տապանը:**

Միլանից ոչ այնքան հեռու գտնվող Տրեկատե փոքրիկ քաղաքում ես հայտնվեցի միանգամայն պատահաբար: Հիշելով երբեմնի հրավերի մասին, ես գտա Բոիտո փողոցի վրա գտնվող N 9 տունը: Դուռը բացեց տանտերը՝ Անժելո Պալեգոն՝ իտալացի լեգենդար ճանապարհորդը: Ընդհանրապես Ապենիններում «ճանապարհորդ»-ի մասնագիտությունը համարյա ոչ ոքի չի զարմացնում: Բայց Անժելոն իր տեսակի մեջ միակն է: Այդ մարդը 12 անգամ բարձրացել է Արարատի գագաթը և միայն մի նպատակով. գտնել Նոյյան տապանը և համայն աշխարհին ներկայացնել իր դարակազմիկ գտածոն: Դե, ի՞նչ «դարակազմիկ», նման երևույթի համար դժվար է նույնիսկ անուն գտնել:

Պալեգոն այդ գաղափարով տարվել էր լրջորեն: Նախ և առաջ նա ձեռք զարկեց Ավետարանի ուսումնասիրմանը և հենվելով Սուրբ Գրքի տեքստի վրա՝ մանրակրկիտ հաշվարկումներ կատարեց, թե մոտավորապես որ բարձրության վրա կարող էր կանգ առնել տապանը և որտեղ է պետք փնտրել այն: Լուրերն այն մասին, որ մարդիկ, տարբեր ժամանակներում տեսել կամ փորձել են տեսնել տապանը, նրան հանգիստ չէին տալիս. Ի վերջո Կտակարանի շատ դեպքեր ու դեպքեր իրական էին, ինչո՞ւ պետք է այդ կոնկրետ հասցե ունեցող երևույթը (Մեծ ու Փոքր Արարատներ) մնար գաղտնի՝ անհայտության քողով ծածկված: Իսկ Ավետարանում շատ պարզ գրված է. «...Յոթ օրից հետո ջրհեղեղն սկսեց և քառասուն օր ու քառասուն գիշեր չդադարեց: Ջուրն այնքան բարձրացավ, որ տապանը մակերեսին լողալ սկսեց: Ջրհեղեղն այնքան ուժեղ էր, որ բոլոր բարձր սարերը ծածկվեցին, ու այն ամենն, ինչ շնչում էր՝ մեռավ: Մնացին միայն Նոյն ու նրանք, ովքեր իր հետ տապանի մեջ էին:

Ջրհեղեղը վերջացավ, ու ջուրն աստիճանաբար պակասել սկսեց: Նոյի տապանը կանգ առավ Արարատ սարի վրա»:

Զուգահեռաբար նա որոնում, գտնում էր տարբեր ճանապարհորդների նոթեր, գրառումներ, հուշեր, որոնք կատարվել էին անցած դարերում, և պատկերացրեք, գտավ հիշատակումներ տապանի հավերժական կանգառի մասին Մեծ Արարատի վրա: Մ.թ.ա. 275 թվականին պարսիկ մի պատմագիր նկարագրում էր մի ուխտագնացություն, որը ձգվում էր դեպի լեռան լանջերը, որպեսզի այնտեղ իջևանած տապանից մասունքներ տանեն իրենց հետո: Տապանի մասին է հիշատակում նաև նշանավոր վենետիկցի վաճառական Մարկո Պոլոն, որն այդ կողմերում եղել է 13-րդ դարում...

1985 թվականին Անժելո Պալեգոն գործի անցավ: Կնոջը հայտնեց, թե Վենետիկ է գնում մորն այցելության, մորն ասաց, թե մեկնում է լեռները, բայց ուր՝ չճշգրտեց, իսկ ինքն ուղղություն վերցրեց դեպի Արարատ, որպեսզի հպվի, շոշափի, հաղորդակցվի առասպելական լեգենդներից ամենահրապուրիչին, ամենաառեղծվածայինին: Նախ օդանավով, հետո ավտոմեքենայով նա հասավ լեռանը, բայց ավաղ, որոնումներն անհաջող էին:

Դրանից հետո Պալեգոն մոլագարի համառությամբ մղվում էր դեպի Արարատ: Նա սարի լանջերով վեր էր մագլցում հռչակավոր Ռեյնհոլդ Մեսսների հետ, գերի էր ընկնում քրդերի ձեռքը, փրկվում էր կատաղած արջի ճանկերից, քնում կարիճների և թունավոր օձերի մեջ, ապրում մի տանիքի տակ ավազակների հետ: Ինչ զոհաբերություններ չես կատարի հանուն ճշմարտության որոնումների...

Եվ այդ փորձություններն իզուր չէին: 1989 թվականի հուլիսի 11-ին կատարվեց այն, ինչին մեր հերոսը ձգտում էր երկար տարիներ: Հեռվից դիտելով

⇨ 8

## Մեծարգո պարոն

«Գիտություն» թերթի ս/թ N 9-ում հրապարակվել է «Գրականության դասականները՝ 25 բառով» հոդվածը, որը վերաբերում է կրթության օպտիմալացման ծրագրին: Ծրագրի կենսագործումը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացնել միջոցառման նպատակն ու հետևանքները: Խմբագրությունը շնորհակալ կլինի, եթե Դուք արձագանքեք մեր հրապարակմանը և Ձեր նկատառումները հայտնեք մեզ:

Կանխավ՝ շնորհակալություն:

*«Գիտություն» թերթի խմբագրություն*

## Տեսք ցեղակից եմ...

Հակառակ ընդունված այն կարծիքին, թե սևամորքներն ու սպիտակամորքները մարդկային զարգացման տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ են, ԴՆԹ-ի գյուտն ու նրա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դա այդպես չէ. անգլիական «Նյու Սայնս» գիտական հանդեսը, անդրադառնալով այդ խնդրին, նշում է, որ համաձայն «ԴՆԹ-ի տվյալների, սևամորթ աֆրիկացիներն ու սպիտակամորթ եվրոպացիները ավելի մոտ են մեկը մյուսին, քան նույն շենքում ապրող երկու սպիտակամորթ հարևանները»: Այնպես, որ հարգելի բարձրահասակ ընթերցող, այս լուսանկարում պատկերված գաճաճ պիգմեյները քո ցեղակիցներն են, անկախ հասակից և գույնից:

# Հշմարիտ առասպելներ

## Հենրի Ֆորդ

**Այս մարդու անունը, թերևս, մոլորակի ամենահայտնի անուններից մեկն է: Շատ-շատերի համար այն դարձել է հաջողակության խորհրդանիշ: Եվ ամենակարևորը, այդ անունը դժվար է անջատել ավտոմեքենաների աշխարհահռչակ մակնիշից: «Ֆորդ» անունով միլիոնավոր ավտոմեքենաներ այսօր երթևեկում են մոլորակի 5 մայրցամաքներում: Ամերիկացիների համար Հենրի Ֆորդը մարդ-առասպել է, բնածին ձուլածո ոսկի, ազգային հերոս: Գերհարուստ այս մարդը ամենակարող էր, անսահմանափակ հնարավորություն ուներ անել՝ ինչ ցանկանա: Եվ, այնուամենայնիվ, նրա կյանքը եղավ մի մեծ դրամա: Նա հասավ առասպելական հաջողությունների, սակայն, ինչպես երևում է, այնպես էլ իսկական երջանկությունը անհասանելի եղավ նրան:**

Հենրի Ֆորդի հայրը Ամերիկա գաղթեց Հոլանդիայից, հացի փող անգամ չուներ: 1847 թվականն էր: Հենրին լույս աշխարհ եկավ 1863 թվականին, երբ հայրը արդեն ունևոր ֆերմեր էր: 12 տարեկան էր, երբ մայրը 8-րդ երեխան ունենալիս հրաժեշտ տվեց աշխարհին:

Ամբողջ կյանքում Հենրի Ֆորդը անսահման քնքշանքով էր խոսում մոր մասին և հաճախ էր կրկնում. «Ես ձգտում եմ ապրել այնպես, ինչպես որ կցանկանար իմ մայրը»: Տղայի կյանքում բախտորոշ եղավ մի դիպված: Մի անգամ հոր հետ սայլով գնալիս, նա ճանապարհին հանդիպեց շոգեշարժիչով աշխատող մի անճոռնի մեքենայի, որ ծուխ ու մուր անելով և սարսափելի դղրդոցով սողում էր ճանապարհով. այդ օրը նա որոշեց իր անելիքը: Ավտոմոբիլային գործ հատուկ չսովորեց, սակայն Ֆորդը ոսկե ձեռքեր ուներ և պայծառ գլուխ: Շրջակայքի ֆերմերները նրան գիտեին որպես հմուտ և տաղանդավոր մեխանիկի: Գործի բերումով Ֆորդը հաճախ էր գնում Դեթրոյտ: Այս հին բնակավայրը այն ժամանակ գտնվում էր Մեծ լճերի ափին: Այդպիսի ուղևորություններից մեկի ժամանակ էլ նա տեսավ գերմանացի գյուտարար Օտտո Նիկոլաուսի բենզինով աշխատող շարժիչը: Նորույթը հենց այն կարևոր գործոնն էր, ինչ անհրաժեշտ էր ինքնաշարժ մեքենայի համար:

Ֆորդի գլխում ամեն ինչ պատրաստ էր: Նա ձեռնամուխ եղավ իր առաջին ավտոմեքենայի ստեղծմանը: Մոլի գյուտարարը աշխատում էր օր ու գիշեր, մոռանում անգամ ուտելը: Եվ ահա 1896 թվականի հուլիսի 4-ին նա իր առաջին մեքենայի նմուշը դուրս բերեց փորձարկման:

Նրա երկրորդ ավտոմեքենան լույս աշխարհ եկավ երկու տարի անց, և սա արդեն նման էր իսկական ավտոմեքենայի: Այն ցնցող տպավորություն թողեց: Իսկ ուղիղ մեկ տարի հետո Դեթրոյտում սկսեց գործել առաջին ավտոմոբիլային կոմպանիան, որի ղեկավարն էր Հենրի Ֆորդը: Կոմպանիայի գործունեությունը նոր թափ ստացավ, երբ 1904-ին Ֆորդի ավտոմեքենաներից մեկը հաղթեց ավտովազքի մրցումներում: 1904-ին Ֆորդը ծախեց 650 ավտոմեքենա:

Նա իր արտադրությունը կողմնորոշեց գլխավորապես դեպի շարքային, մասսայական գնորդը և շահեց: Շուտով Ամերիկայի ճանապարհներին հայտնվեց փառաբանված «Ֆորդ-Т» մոդելը՝ պարզ, հուսալի, արագընթաց և ամենակարևորը՝ ոչ թանկ. «Իմ ավտոմեքենան հասանելի է քիչ թե շատ լավ վաստակող յուրաքանչյուր քաղաքացու համար»: Եվ դա այդպես էր: Զուր չէ, որ նրա մասին սկսեցին ասել՝ «Ֆորդը ավտոմեքենա նստեցրեց ամբողջ աշխարհը»:

Շուտով Ֆորդը իրականացրեց մի ծրագիր, որ իսկական հեղափոխություն էր ավտոմոբիլային արդյունաբերության մեջ: Նա ներդրեց հոսքագծային սկզբունքը: Արդյունքը եղավ այն, որ 1921 թվականին Ֆորդի հոսքագծերից իջավ հինգ միլիոներորդ ավտոմեքենան:

Ֆորդը հասավ ֆանտաստիկ հաջողությունների, նույնքան ֆանտաստիկ էր օրօրի աճող նրա անբավ հարստությունը: Սակայն կար մի խնդիր, որ անլուծելի եղավ ավտոմոբիլային արքայի համար: Ոչ մի կերպ չէր հարթվում, չէր ջերմանում նրա հարաբերությունը միակ որդու՝ էդսելի հետ: Ու թեև նրան էր վստահել իր կայսրության պրեզիդենտի աթոռը, սակայն չէր դադարում նրան դիտողություններ անել, սովորեցնել հա սովորեցնել: Նրան թվում էր, թե կոփում, պատրաստում է իսկական գործարար արտադրության արքա, մինչդեռ որդուն պատճառում էր անսահման տառապանքներ: Հետևանքը եղավ այն, որ էդսելը 50-ը չբոլորած մահացավ: Եվ միայն որդու մահից հետո Ֆորդը գիտակցեց իր մեղքը սիրած տղայի նկատմամբ:

Մոլորակի ավտոմոբիլային արդյունաբերության ամենահզոր արքաներից մեկի անսպառ եռանդը իր տեղը զիջեց անտարբերությանն ու անգործությանը: Տարիքն առած Ֆորդը ներփակվեց իր մեջ և փաստորեն հրաժարվեց բոլոր գործերից: Կոմպանիայի պրեզիդենտի աթոռը զբաղեցրեց թոռը՝ նույնպես Հենրի Ֆորդ: Հենրի Ֆորդ Երկրորդի օրոք կոմպանիան նոր կյանք ստացավ և բուռն վերելք ապրեց:

Հենրի Ֆորդ ավագը 84 տարեկան էր: 1947 թվականի ապրիլի 7-ին Միչիգանում, ուր ապրում էր հռչակավոր Ֆորդը, ծանծրալի, չդադարող անձրև էր մաղում: Վառել էին բոլոր բուխարիները: «Այսօր ես լավ կքնեմ»,- ասաց Ֆորդը և սովորականից շուտ ուղղվեց ննջարան: Ուշ գիշերին նրա անսահման սիրելի կինը՝ Կլարա Ֆորդը, որի հետ ամուսնանալը Ֆորդը համարում էր իր ամենաերջանիկ ընտրությունը, ինչ-որ ներքին տագնապի նախազգացումով բժիշկ հրավիրեց տուն: Սակայն արդեն ուշ էր. ննջարան մտնելով, նրանք մոլորակի առասպելական ավտոմոբիլային արքային գտան մեռած:



## Գերնոր աստղերի անցյալը

Ֆրանսիացի աստղագետները արդեն 30 տարի է հետազոտում են Հարդագողի համաստեղության երկու մարմինների բախումը, որից կարող է ծնվել նոր գերհզոր աստղ: Գիտնականներն այն կարծիքին են, որ տիեզերքում ամեն օր ծնվում են նոր աստղեր ու մահանում հները: Բայց ինֆորմացիան դրանց մասին կարող է մեզ հասնել գուցե միլիոն տարի հետո: Հենց այդ 30 տարվա սպասումները, ինչ իմանաս գուցե միլիոն տարվա տարիք ունեցող երևույթների արձագանքներ են միայն: Սակայն ինչ էլ լինի, դա աստղագիտության համար անգնահատելի տեղեկատվություն է լինելու:

# Կորսված...

սառցալեռը Պալեգոն 4300 մետր բարձրության վրա տեսավ միմյանց համարյա զուգահեռ երկու խոր ձեղք, որոնք գծագրվում էին սառույցների մեջ: Նրանք թվում էին ուղղանկյան երկու ուղիղ կողմեր, իսկ ինքը՝ ուղղանկյունը, հիշեցնում էր մի վիթխարի փայտե կառուցվածքի մաս: Այդ ժամանակ սառցալեռի վրա բարձրանալ չհաջողվեց՝ ձնահոսքերի պատճառով, բայց Պալեգոյին հաջողվեց ենթադրյալ տապանը նկարահանել: Նրա չափերը՝ հարյուրը քսանհինգի հարաբերությամբ, միանգամայն համեմատելի էին առասպելական նախանմուշի չափերին: Հաջորդ ուղևորություններից նա, որպես ապացույց, փայտի նմուշներ բերեց, և ռադիոիզոտոպային փորձաքննումները դրանց վերագրեցին մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին...

Բայց գիտական աշխարհը չի շտապում ընդունել Անժելոի գտածոն: Մի կողմից հասարակայնությունը ցանկանում է սեփական ձեռքերով շոշափել այն, մյուս կողմից՝ չի ձգտում մասշտաբային էքսպեդիցիայի համար դրամ տրամադրել: Պալեգոն մի հույս էլ ունի. դրանք ռուս օդաչուների մասին փաստաթղթերն են, որոնք պատմում են, թե ինչպես նրանք 1916 թվականին Արարատի լանջին հայտնաբերել են անհասկանալի մի օբյեկտ, որը նման է եղել բազմահարկ տան: Նիկոլայ 2-րդ թագավորը լսելով զեկույցը, արշավախումբ է ուղարկում 4300 մետր բարձրության վրա գտնվող այդ առարկան ուսումնասիրելու: Նույն թվականի ամռանը Արարատ են բարձրանում ռուս զինվորականները: Նրանք ոչ միայն գտնում են առեղծվածային փայտե կառուցվածքը, այլև ներս են թափանցում և նույնիսկ չափումներ են կատարում: Բացի այդ, տապանում (իսկ դա անշուշտ տապան էր) ռուս զինվորները տեսան փոքրիկ սենյակներ և վիթխարի դահլիճներ: Թագավորը ցանկանում էր ևս մի արշավ էլ ձեռնարկել, բայց սկսվեց հեղափոխությունը: Փաստաթղթերը անհետացան արխիվների հետ, և այժմ Պալեգոն վիթխարի ջանքեր է գործադրում, որպեսզի ինֆորմացիայի փշուրներ հավաքի, որոնք լույս սփռեն այդ հազվագյուտ գտածոյի պատմության վրա:

Անդադրում հետախույզը համոզված է, որ շատ բան պահպանված է: Նա հաստատեց, որ 1840 թվականին ժայթքած հրաբուխը տապանը սառցադաշտի հետ բաժանել է, և այդ ժամանակից կառուցվածքի երկու հսկայական ֆրագմենտը (մասերը) աստիճանաբար հեռանում են միմյանցից: Այնուհետև նրա ավելի փոքր մասը իր հերթին բաժանվել է դարձյալ երկու մասի: Եվ նրանցից մեկում այն հիշատակված սենյակներն են, որտեղ ըստ Պալեգոյի ապրել են Նոյն ու նրա ընտանիքը՝ բոլոր կենդանիների հետ: Պալեգոն նոր արշավախումբ է հավաքում: Բարդություններ շատ կան. թուրքական իշխանությունները քրդերով բնակեցված տարածքներ մուտքը խիստ դժվարությամբ են թույլատրում արտասահմանցիներին: Իսկ եթե Անժելոն, այնուամենայնիվ, այնտեղ ընկնի, նրան դարձյալ վիճակված է բազմաթիվ դժվարությունները հաղթահարել միայնակ: Հիմնահարցերի մեծ մասը կարող էր ուղղաթիռը լուծել միանգամից, բայց ո՞վ է նրան տրամադրելու այդ շքեղ նվերը: Անժելո Պալեգոյին մի հարց էլ է անհանգստացնում. մեկնել Մոսկվա և հանրությանը պատմել իր գտածոների մասին: Գուցե, այնժամ, ինչ-որ բան հայտնաբերեն այնտեղի արխիվներում: Իսկ մինչ այդ Անժելոն ստիպված է ապրել «աննորմալ» ճանապարհորդի կասկածելի փառքով և հույսը դնել միայն իր վրա:

Հաջողություն ցանկանանք նրան:

*Սերգեյ ԻԵՋՈՒԻՏՈՎ*

*Հոդվածը ռուսապանական հեռուստատեսության թղթակից*

# Ուշաթափվող այծեր

**Այս արարածները կարծես բարձրաշխարհիկ տիկինների տնազն են: Ամեն մի հարմար պահի՝ նրանք վերցնում և ուշաթափվում են:**

Հայտնի ճշմարտություն է. 19-րդ դարում բարձրաշխարհիկ ընդունելությունների և պարահանդեսների ժամանակ ազնվատոհմիկ տիկինները սովորություն ունեին պատեհ-անպատեհ ուշակորույս լինել: Դրա պատճառը չափից դուրս սեղմող լանջակալներն էին կամ իրենց վրա տղամարդկանց հատուկ ուշադրությունը հրավիրելու ցանկությունը: Վերջերս պարզվեց, որ ուշաթափվել կարող են ոչ միայն հմայիչ կանայք, այլև... այծերը:

Միոթոնյան (ուշաթափվող) այծերը ամերիկյան հազվագյուտ տեսակ են: Դրանց մասին առաջին անգամ խոսվեց 19-րդ դարի 80-ական թվականներին: Իսկ հարյուր տարի անց, 20-րդի 80-ականներին, դրանք քիչ էր մնում իսպառ անհետանային երկրի երեսից:

Պատմությունն ասում է, որ այծերի այդ տեսակը առաջինը երևաց ԱՄՆ-ի Թեննեսիի նահանգում: Որտեղի՞ց բերվեցին դրանք, ինչպե՞ս հայտնվեցին Ամերիկայում՝ ստույգ հայտնի չէ: Միայն փաստ է, որ դրանք սկզբում ընդամենը չորսն են եղել:

Միոթոնյան այծերը հռչակված են գենետիկ մի զարմանալի և հազվագյուտ հիվանդությամբ: Երբ նրանք զարմանում են կամ վախենում, նրանց մոտ առաջանում է մկանների լիակատար կաթված, և կենդանին բացարձակապես կորցնում է շարժվելու ունակությունը: Ըստ որում, կենդանին ոչ մի ցավ չի զգում և չի կորցնում գիտակցությունը: Հասկանալի է այդ վիճակում նա չի կարողանում մնալ ոտքերի վրա և տապալվում է գետին:

Այս հատկության համար էլ ԱՄՆ-ի շատ նահանգներում դրանց կոչում են նաև «նյարդային այծեր»: Նյարդային այծերը սովորաբար այծերի ճարպկությունն ու արագաշարժությունը չունեն, և երևի այդ պատճառով 40 տոկոսով ավելի հաստլիկ են իրենց սովորական ցեղակիցներից: Այլ խոսքով՝ մսատու ցեղ են:

Ե՞րբ է ուշաթափվում այս զարմանալի զգայուն այծը. անմիջական վտանգ կյանքի համար, չափից շատ հացահատիկային կեր, և երբ կողքին հայտնվում է հակառակ սեռի գեղեցիկ արու կամ գեղեցկուհի:

Այս հանգամանքներից ամեն մեկը կենդանուն ուշաթափ է անում, և 10-15 վայրկյան նա անշարժ թավալվում է գետին:

Ուշաթափության հիվանդության այս առանձնահատուկ գենը սույն այծերի մոտ ժառանգաբար փոխանցվում է սերնդից սերունդ:

Սակայն այս երկար տարիների ընթացքում ուշաթափվող այծերի գլխավոր արժեքը նրանց առատ մսատվությունը չէ: Ոչխարաբույծ շատ ֆերմերներ սերնդե սերունդ այդ թշվառականներին օգտագործում էին չափազանց անբարո և ստոր նպատակով: Փոխանակ շներ և մարդիկ պահելու ոչխարի հոտերը պահպանելու համար, նրանք յուրաքանչյուր հոտում պահում էին մի «նյարդային այծ»:

Երբ անտառից կամ ինչ-որ տեղից անսպասելի հայտնվում էր գիշատիչը, ճարպիկ ոչխարները փախչում էին այս կամ այն կողմ, իսկ դժբախտ այծը մեկեն ուշաթափ էր լինում և անշարժ տապալվում գետին: Գիշատիչը կամ գիշատիչները պատառոտում էին խեղճ այծին, իսկ ոչխարի հոտը մնում էր անվնաս:

Այնպես որ՝ ուշաթափվող այծերին հանգիստ կարելի է անվանել նահատակներ, կամ որ ավելի ճիշտ է, իսկական «քավության նոխազներ»:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24 դ,
հեռախոս՝ 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 13.10.2004թ.
"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
թերթը հրատարակվում է հովանավորչական միջոցներով: